

2763

BK23

---

0-78





Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՈՏԶՈՎԻԶՄԻ

ՅԵՎ

ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ

ՖՐԱԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

3K23

0-78

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՒՆԻ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԱՅ 02 JUN 2005

3K23

14 NOV 2005

0-78

պ. Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՈՏԶՈՎԻԶՄԻ

ՅԵՎ

ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ

ՖՐԱԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

573

17

11 SEP 2012

2163



1573  
40

В. И. ЛЕНИН  
О ФРАКЦИИ СТОРОННИКОВ  
ОТЗОВИЗМА И БОГОСТРОИТЕЛЬСТВА  
Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940

### ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1908 թվին բուլղարացիների մի մասը պահանջում էր բան-  
վորների դեպուտատներին հետ կանչել Պետական դումա-  
յից: Կազմակերպելով իրենց առանձին խումբը՝ ոտոզ-  
վիստները—«չուս տված լիկվիդատորները» պայքար սկսե-  
ցին Լենինի դեմ, փորձում էին վիժեցնել Դումայի և այլ  
լեզալ կազմակերպությունների ամբիոնը մասսայական-քա-  
ղաքական աշխատանքի համար՝ ոգտազործելու լենինյան  
պլանը:

Միևնույն ժամանակ մարքսիզմից հեռացած, նրան թըլ-  
նամի ինտելիգենտների մի մասն սկսեց ի հաճույս սուսա-  
կան բուրժուազիայի քարոզել նոր կրոն ստեղծելու անհրա-  
ժեշտությունը («աստվածաշինարարություն»):

Ոտոզվիստների և մյուս վերասերակազմների վարքագի-  
ծը քննություն առնելու համար 1909 թ. հունիսի 21—30-ը  
Փարիզում հրավիրվեց բուլղարացի «Пролетарий» լրագրի  
ընդլայնված խմբադրության խորհրդակցություն: Խոր-  
հրդակցությունը, վեր անցավ Լենինի անմիջական ղեկա-  
վարության ներքո, խիստ դատապարտեց պրոլետարիատի  
և նրա կուսակցության այդ մանր-բուրժուական ուղեկից-  
ներին: Ոտոզվիստներն ու աստվածաշինարարները վստարվե-  
ցին բուլղարացի կազմակերպությունից:

Այդ վերասերակազմների՝ Մաքսիմովի (Բողղանով, Ս.  
Ս.) և Նիկոլայի (Կրասին, Լ. Բ.) կողմից առանձին թեր-  
թիկի մեջ զարգացրած հայացքների քննարկմանն ու մեր-  
կացմանն էր նվիրված Լենինի «Ոտոզվիզմի և աստվածաշի-  
նարարության կողմնակիցների Ֆրակցիայի մասին» վերնա-  
դրով հոդվածը: Հոդվածը տպագրվեց 1909 թ. սեպտեմբե-

րի 24-ին «Пролетарий» լրագրի № 47—48-ի հատուկ հավելվածում:

Տպագրվում է Յերկերի 1937 թ. հրատարակութան XIV հատորի տեքստի համաձայն:

## ՈՏՋՈՎԻՉՄԻ ՅԵՎ ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ընկ. ընկ. Մաքսիմովն ու Նեկոլայեվը հատուկ թերթիկ են հրատարակել «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրության հեռացված անդամների հաշվետվությունը ընկրուչեիկներին» վերնագրով: Մեր հեռացվածները դառնորեն, խիստ դառնորեն դանդատվում են հասարակությանն այն բանի համար, թե ինչպիսի վերավորանքներ է հասցրել նրանց խմբագրությունը և ինչպես է նրանց հեռացրել:

Վորպեսզի բանվոր դասակարգի կուսակցությունը ցույց տանք, թե ինչպիսի սորաի մարդիկ են դառնորեն դանդատվող հեռացվածները այդ հասարակությունը, ամենից առաջ քննություն անենք թերթիկի սկզբունքային բովանդակությունը: «Пролетарий»-ի № 46-ից և այդ համարի հավելվածից ընթերցողները գիտեն, Վոր «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրության խորհրդակցությունը ընկ. Մաքսիմովին ճանաչեց իբրև մեր կուսակցության մեջ նոր Ֆրակցիա կազմակերպողներից մեկը, — մի Ֆրակցիա, վորի հետ վոչ մի ընդհանուր բան չունի բուլչեիզմը, — և իր վրայից դեցեց «ամեն մի պատասխանատվություն ընկ. Մաքսիմովի բոլոր քաղաքական քայլերի վերաբերմամբ»<sup>1</sup>: Խորհրդակցության բանաձևերից յերևում է, վոր բուլչեիկներից պատակալուղ նոր Ֆրակցիայի (կամ ավելի ճիշտ՝ պատակալուղ Մաքսիմովի և նրա բարեկամների) հետ ունեցած տարածայնություն հիմքը հանդիսանում է նախ՝ ոտզովիզմն ու ուլտիմատիզմը, յերկրորդ՝ աստվածաշինարարությունը: Յերեք մանրամասն բանաձևերում շարադրված է բուլչեի-

<sup>1</sup> Տե՛ս Յերկերի հատոր XIV, էջ 85—111: Խմբ.:

կյան Ֆրակցիայի հայացքը թե՛ մեկ և թե՛ մյուս հոսանքի վերաբերմամբ:

Հասցա ի՞նչ են պատասխանում այժմ դասնորեն դանդաղ հեռացվածները:

I

Սկսենք ոտզովիզմից: Հեռացվածները անցած տարիներին պառլամենտական կամ դումայական փորձի հանրազուժարներն են տալիս, արդարացնում են Բուլիզինյան և Վիտտելյան Դումաների լոյկոսը, ինչպես նաև մասնակցութունը II Դումայում և շարունակում են.

«... Սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ այդ ամենը դարձյալ փոխվում է: Կուսակցութունը չի կարող այդ ժամանակ խոչոր և պայծառ ընտրական կամպանիա անցկացնել, չի կարող իրեն արժանի պատմենտական ներկայացուցչութուն ձևեր բերել»...

Ինքնուրույն, բուլչեիկյան հին հրատարակութունները քարոզարված դատողության հենց առաջին Ֆրազը, — և մեր առջևն և ոտզովիտական քաղաքական թերամտության ամբողջ անհատակ անդունդը: Հասցա մեկ մտածեցեք, ամենասիրելիներ, կարո՞ղ ե կուսակցութունը սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ անցկացնել մարտականներին համար «հրահանգչական խմբերի և դպրոցների» «խոչոր և պայծառ» կազմակերպում, վորի մասին դուք խոսում եք ձեր յերկի նույն եջում, նույն սյունակում: Հասցա մեկ մտածեցեք, ամենասիրելիներ, կարո՞ղ ե արդյոք կուսակցութունը «իրեն արժանի ներկայացուցչութուն» ձևեր բերել այդպիսի դպրոցներում: Յեթե դուք մտածել իմանալիք և փոքրիչատե ընդունակ լինեյիք դատել քաղաքականորեն, ո՞վ դուք, անարդար կերպով հեռացվածներ, այս դուք կնկատեյիք, վոր ձեզ մոտ մեծագույն անհեթեթութուն և դուրս դալիս: Փոխանակ քաղաքականորեն մտածելու, դուք կատուժ եք «պայծառ» ցուցանակից և այդ պատճառով ել կուսակցական իվանուչիաների դրության մեջ եք ընկնում: Դուք շաղակրատում եք «հրահանգչիչների դպրոցներին» մասին և «պրոպագանդան դրքի մեջ ուժեղացնելու» (՝) մասին (նույն տեղում), վորովհետև դուք, ինչպես և

ոտզովիտաների և ուլտիմատիտաների բանակից յեւած բոլոր քաղաքական թերունները, այդ տեսակի դործունեյութունը համարում եք առանձնապես «պայծառ», բայց դուք չեք կարողանում մտածել դործունեյության այդ ձևերի իրական (և վոչ բառային) դործադրության պայմանների մասին: Դուք անգիր եք արել միքանի բուլչեիկյան բառիկներ և լուրդունդներ, բայց կասկանալ, դուք նրանցից բացարձակապես վոչինչ չեք հասկացել: «Սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ» կուսակցության համար դժվար ե ամեն մի աշխատանք, բայց, վորքան ել մեծ լինեն դժվարութունները, այնուամենայնիվ հնարավոր ե արժանավոր պառլամենտական ներկայացուցչութուն ձևեր բերել: Այդ ե ապացուցում, որինակ, նաև դերմանական սոցիալ-դեմոկրատիայի փորձը թեկուզ բացառիկ որենքը մտցնելու ժամանակների «սուր և ուժեղացող ռեակցիայի» դարաշրջանում: Ժխտելով այդ հնարավորութունը՝ Մաքսիմովը և Ընկ. դրոստում են միմիայն իրենց լիակատար քաղաքական տգիտություն և միմիայն իրենց լիակատար քաղաքական տգիտությունը: Հանձնարարել «սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ» «հրահանգչական դպրոցներ» և «պրոպագանդա-յի ուժեղացում դորքերի մեջ» — և միևնույն ժամանակ ժրխտել կուսակցության համար արժանավոր պառլամենտական ներկայացուցչութուն ունենալու հնարավորութունը, այդ նշանակում և այնպիսի ակնբախ անհեթեթութուններ ասել, վորոնք արժանի յեն գետեղվելու տրամաբանական անհեթեթութունների ժողովածուի մեջ՝ գլխաղիայի ստորին դասարանների աշակերտների համար: Թե՛ հրահանգչական դպրոցները, թե՛ պրոպագանդայի ուժեղացումը դորքերի մեջ յենթադրում և անպայման խախտում հին որենքների, նրանց ձեզում, — այնինչ պառլամենտական դործունեյութունը ամենևին անպայման չի յենթադրում և, համեմայն դեպք, անչափ ավելի հաղվադեպ և յենթադրում հին որենքների խախտումը նոր հասարակական ուժի կողմից: Հիմա մտածեցեք, սիրելիներ, յերբ և ավելի հեշտ խախտել հին որենքները — սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ, թե շարժման վերելքի ժամանակ: Մտածեցեք, ո՞վ դուք, անարդար կերպով հեռացվածներ, և ամաչեցեք այն տխմա-

բուժյունները համար, վոր դուք ասում եք՝ պաշտպանելով ձեր սրտին սիրելի ոտգովիստներին:

Այնուհետև: Վո՞ր տեսակի գործունեյությունն է յենթադրում մասսաների եներգիայի ավելի մեծ թափ, մասսաների ավելի մեծ ազդեցություն անմիջական քաղաքական կյանքի վրա, — պառլամենտական գործունեյությունն արդէոք հին իշխանության ստեղծած որենքի համաձայն, թե՞ ուղղմական պրոպագանդան, վորը միանգամից և ուղղակի խարխրում է այդ իշխանության նյութական ուժի լծակները: Մտածեցե՛ք, սիրելիներ, և դուք կտեսնեք, վոր պառլամենտական գործունեյությունը մասնանշված՝ տեսակետից կանգնած է հետևում: Իսկ դրանից ի՞նչ է հետևում: Իսկ դրանից հետևում է այն, վոր վորքան ավելի ուժեղ է մասսաների անմիջական շարժումը, վորքան ավելի մեծ է նրանց եներգիայի թափը, այլ խոսքերով՝ վորքան ավելի շատ կարելի յե խոսել ժողովրդի «սուր և ուժեղացող» հեղափոխական դրոհի մասին, և վոչ թե «սուր և ուժեղացող ռեակցիայի» մասին, — այնքան ավելի հնարավոր, այնքան ավելի անխուսափելի, այնքան ավելի հաջող կդառնան նաև գործքերի մեջ մղվող պրոպագանդան և մասսայական շարժման հետ իրոք կապված մարտական յելույթները, և վոչ թե մերկապարանոց մարտականների ավանտյուրիզմին հանդող յելույթները: Հենց այդ պատճառով էլ, ո՛ր, անարդարացի հեռացվածներ, բոլշևիզմը կարողացավ թե՛ մարտական գործունեյությունը, թե՛ պրոպագանդան գործերի մեջ առանձնապես ուժեղ կերպով առաջ մղել «սուր և ուժեղացող» հեղափոխական վերելքի ժամանակաշրջանում. — հատկապես հենց այդ պատճառով բոլշևիզմը կարողացավ կիրառել (սկսած 1907 թվից) և 1909 թվի մոտերքը վերջնականապես կիրառեց իր Փրակցիայի անջատումն այն մարտականութունից, վորը «սուր և ուժեղացող ռեակցիայի ժամանակ» հանգեց, անխուսափելիորեն հանդեց ավանտյուրիզմի:

Մեր հերոսների մոտ, վորոնք սերտել են միջանի բոլշևիզյան բառեր, ամեն ինչ հակառակն է դուրս գալիս. պայքարի բարձրագույն ձևերը, վորոնք վոչ մի տեղ և

յերբեք աշխարհում չեն հաջողվել առանց մասսաների անմիջական դրոհի, հանձնարարվում են առաջին պլանում, վորպես «հնարավոր» ձևեր սուր ռեակցիայի դարաշրջանում, — իսկ պայքարի ստորին ձևերը, վորոնք յենթադրում են վոչ այնքան որենքի անմիջական խախտումը մասսաների պայքարի միջոցով, վորքան որենքի ոգտագործումը պրոպագանդայի և ազիտացիայի համար, վոր նախապատրաստում է մասսաների գիտակցությունը պայքարի համար, հայտարարվում են «անհնարի՛ն»:

Ոտգովիստներն ու նրանց «հեռացված» ձայնակիցները լսել են և սերտել, վոր բոլշևիզմը մասսաների անմիջական պայքարը, վոր շարժման մեջ է դրավում նույնիսկ գործերին (այսինքն՝ բնակչության ամենից ավելի քաղաքացած, ամենից ավելի քիչ շարժուն, պրոպագանդայից ամենից ավելի պաշտպանված մասին և այլն) և մարտական յելույթները վերածում է ապստամբության իրական սկզբի, — համարում է շարժման բարձրագույն ձև, իսկ պառլամենտական գործունեյությունն առանց մասսաների անմիջական շարժման, — համարում է շարժման ստորին ձև: Ոտգովիստներն ու նրանց ձայնակիցները, ինչպես Մաքսիմովն է, այդ լսել են և սերտել, բայց չեն հասկացել, և այդ պատճառով էլ խայտառակվեցին: Բարձրագույնը — նշանակում է «պայծառը», մտածում է ոտգովիստն ու ընկ. Մաքսիմովը, — հապա մի, յես կրդայեմ «մի քիչ ավելի պայծառ». անշուշտ ամենից ավելի հեղափոխական դուրս կդա, իսկ քըննության առնել, թե ինչը ինչին է վերաբերում, այդ է չարե՛ն է:

Լսեցե՛ք Մաքսիմովի դատողության շարունակությունը (մենք ցիտատը շարունակում ենք ընդհատված տեղից) .

... «Ռեակցիայի մեխանիկական ուժը կարում է արդեն ստեղծված կուսակցական Փրակցիայի կազմ մասսաների հետ և սոսկախորեն դժվարացնում կուսակցության ազդեցությունը նրա վրա, իսկ այդ հասցնում է այն բանին, վոր այդպիսի ներկայացուցչութունն անընդունակ է դառնում բավականաչափ լայն և խոր կազմակերպական-պրոպագանդիստական աշխատանք կատարելու կուսակցության ոգտին: Իսկ հենց կուսակցության թուլացման դեպքում չի բացավում նույնիսկ Փրակցիայի վերաբերման վտանգը, սոցիալ-դեմոկրատիայի հիմնական ուղուց նրա շեղման վտանգը»...

Ճիշտ է՞ արդե՞ք, վորքան այս անձան սիրուն է: Յերբ խոսքը վերաբերում է պայքարի ստորին, յենթաորի նախան ձևերին, այն ժամանակ մեզ սկսում են վախեցնել՝ «ոեակցիայի մեխանիկական ուժը», «բավականաչափ լայն աշխատանք կատարելու անընդունակությունը», «այլասերման վտանգը»: Իսկ յերբ խոսքը վերաբերում է դասակարգային պայքարի բարձրագույն, հին որենքները խախտող ձևերին, այն ժամանակ «ոեակցիայի մեխանիկական ուժը» չբանում է, զորքերի մեջ «բավականաչափ լայն» աշխատանք կատարելու վոչ մի «անընդունակություն» մեջտեղ չի դալիս, հրահանգչական խմբերի և գալոցների վոչ մի «այլասերման վտանգի» մասին՝ դիտե՞ք ինչ՝ խոսք անգամ չի՞ կարող լինել:

Ահա «Пролетарий»-ի խմբագրություն ամենալավ արդարացումը, թե ինչու նա պետք է հեռացնի այն քաղաքական դործիչներին, վորոնք այդպիսի իրեաներ են տանում մասսաների մեջ:

Հասարակականները ոչ արեք, ո՛վ դուք, անարդարացի հեռացվածներ. յերբ իրոք առկա յեն սուր և ուժեղացող ոեակցիայի պայմաններ, յերբ այդ ոեակցիայի մեխանիկական ուժն իրոք կապերը կտրում է մասսաների հետ, գծվաբացնում բավականաչափ լայն աշխատանքը և թուլացնում կուսակցությանը, հատկապես հենց այդ ժամանակ կուսակցության առանձնահատուկ խնդիրն է դառնում պայքարի պառլամենտական զենքին տիրապետելը. և այդ վո՛չ թե այն պատճառով, ո՛ր, անարդարացի հեռացվածներ, վոր պառլամենտական պայքարը պայքարի ուրիշ ձևերից ավելի բարձր է. վո՛չ, այլ այն պատճառով հենց, վոր այն նրանցից ավելի ցածր է, ավելի ցածր է, որինակ, այնպեսի պայքարից, վորը մասսայական շարժման մեջ է քաշում նույնիսկ զորքին, վորը մասսայական դործադուլներ, շաղտամբություններ է ստեղծում և այլն: Իսկ ի՞նչ ձևով կարող է պայքարի ստորին ձևի տիրապետումը կուսակցության առանձնահատուկ (այսինքն՝ տվյալ մոմենտը մյուս մոմենտներից տարբերող) խնդիրը դառնալ: Հենց այն ձևով, վոր, վորքան ավելի ուժեղ է ոեակցիայի մեխանիկա-

կան ուժը և վորքան ավելի յե թուլացած կապը մասսաների հետ, այնքան ավելի շատ է հերթի դրվում մասսաների գիտակցություն շարժապատրաստման խնդիրը (և վոչ թե ուղղակի դործողություն խնդիրը), այնքան ավելի շատ է հերթի դրվում պրոպագանդայի և ագիտացիայի՝ հին իշխանությունից ստեղծած ուղիները ոգտագործումը (և վոչ թե հենց այդ հին իշխանության դեմ մասսաների անմիջական դործը):

## II

Յուրաքանչյուր մարքսիստի համար, վորը գեթ փոքր-իչատե խորամուխ է յեղել Մարքսի ու Ենգելսի աշխարհայեցողությունը, յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատի համար, վորը գեթ փոքրիչատե ծանոթ է միջազգային սոցիալիստական շարժման պատմությունը, վոչ մի զարմանալի բան չի ներկայացնում պայքարի ստորին ձևերից մեկի այս փոխարկումը հատուկ պատմական մոմենտի պայքարի սպեցիֆիկ դործիքի: Անարխիստները բացարձակապես և յերբեք ի վիճակի չեն յեղել ըմբռնելու այս հասարակ բանը: Այժմ մեր ողորմիտներն ու նրանց վտարված ճանաչիչները փորձում են ուստական սոցիալ-դեմոկրատական միջավայրը փոխադրել անարխիզմի մտածողության մեթոդները, բղավելով (Մարքսիմովի և Լինկ. նման), թե «Пролетарий»-ի մոտ իշխում է «ինչ գնով էլ լինի՝ պառլամենտարիզմի» թեորիան:

Վորպեսզի պարզաբանենք, թե ինչ ատիճանի վոչ-խելացի և վոչ-սոցիալ-դեմոկրատական են Մարքսիմովի և Լինկ. այդ ազդակները, ստիպված ենք դարձյալ այրուքներից սկսել: Մտածեցե՛ք մի, ո՛ր, անարդար կերպով հեռացվածներ, ի՞նչն է կազմում դերմանական սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականության ու տակտիկայի առանձնահատուկ տարբերությունը՝ ուրիշ յերկրների սոցիալիստական բանվորական կուսակցությունների համեմատությամբ: Պառլամենտարիզմի ոգտագործումը. բուրժուական-յունկերական (ուստերեն՝ մոտավորապես ոկտյարիստական-սեհարյուրյակային) պառլամենտարիզմի փոխարկումը բանվո-

րական մասսաների սոցիալիստական դաստիարակութեան ու կազմակերպութեան գործիքի: Նշանակուած է այս արդեօք, վոր պառլամենտարիզմը սոցիալիստական պրոլետարիատի պայքարի բարձրագույն ձևն է: Ամբողջ աշխարհի անարխիստները կարծում են, վոր նշանակուած է: Նշանակուած է այս արդեօք, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատները կանգնած են՝ ինչ դնով ել լինի պառլամենտարիզմի տեսակետի վրա: Ամբողջ աշխարհի անարխիստները կարծում են, վոր նշանակուած է, և այդ պատճառով ել նրանք ալեկի ատելի թշնամի չունեն, քան գերմանական սոցիալ-դեմոկրատիան է, նրանց համար ալեկի սիրված նշանակետ չկա, քան գերմանացի սոցիալ-դեմոկրատները: Յեւ Ռուսաստանում ել, յերբ մեր սոցիալ-հեղափոխականներն սկսում են սիրաբանել անարխիստները հետ և իրենց «հեղափոխականութիւնը» ունել, նրանք անպայմանորեն փորձում են դուրս քաշել գերմանական սոցիալ-դեմոկրատները այս կամ այն իրական կամ կարծեցյալ վրիպումները և այստեղ յեզրակացութիւններ հասնել սոցիալ-դեմոկրատիայի դեմ:

Հիմա ալեկի առաջ դնանք: Վո՞րն է անարխիստների դատողութիւնները սխալը: Այն, վոր նրանք, արմատապես սխալ պատկերացումներ ունենալով հասարակական դարգացման ընթացքի մասին, չեն կարողանում հաշիւ առնել կոնկրետ քաղաքական (և տնտեսական) դրութեան առանձնահատկութիւնները տարբեր յերկրներում, վորոնք պայմանավորում են վորոշ ժամանակաշրջանի համար պայքարի մերթ այս և մերթ այն միջոցի սպեցիֆիկ նշանակութիւնը: Իրականութեան մեջ գերմանական սոցիալ-դեմոկրատիան վո՞չ միայն կանգնած չէ ինչ դնով ել լինի պառլամենտարիզմի տեսակետի վրա, վո՞չ միայն ամեն ինչ և բոլորը չի ստորադասում պառլամենտարիզմին, այլ ընդհակառակը, հենց նա յե, վոր պրոլետարիատի միջագոյնն բանակի մեջ ամենից ալեկի լավ կերպով է ծավալել պայքարի այնպիսի արտապառլամենտական գործիքները, ինչպիսին սոցիալիստական մամուլն է, ինչպիսին արհեստակցական միութիւններն են, ինչպիսին ժողովրդական հավաքույթների սիստեմամիկ ոգտագործումն է, ինչպիսին յերիտասարդու-

թիւնը սոցիալիստական վոգով կրթելն է և այլն և այլն:

Վո՞րն է այստեղ բանի ելութիւնը: Այն, վոր ամբողջ մի շարք պատմական պայմաններ համակցութիւնը վորոշ ժամանակաշրջանի Գերմանիայի համար պառլամենտարիզմը դարձրեց պայքարի սպեցիֆիկ գործիք, վո՞չ թե դիւսալոր, վո՞չ թե բարձրագույն, վո՞չ թե խոշոր, վո՞չ թե մյուսների հետ համեմատած՝ ելական, այլ հենց սպեցիֆիկ, ուրիշ յերկրների հետ համեմատած՝ ամենից ալեկի ընտրու: Այդ պատճառով ել՝ պառլամենտարիզմն ոգտագործելը դուրս յեկալ ամբողջ սոցիալիստական գործի, սրինակելի դրվածքի սիմպտոմ (վո՞չ թե պայման, այլ սիմպտոմ), նրա բարձր, վերելում մեր կողմից թվարկված ճյուղավորումներով:

Գերմանիայից անցնենք Ռուսաստանին: Ում մտքով վոր անցներ այս կամ այն յերկրի պայմաններն ամբողջովին հավասարեցնել միմյանց, նա ամբողջ մի շարք խոշորագույն սխալների մեջ կընկներ: Բայց փորձեցեք հարցն այնպես դնել, ինչպես պարտադիր է այն դնել մարքսիստի համար: Վո՞րն է սոյալ մոմենտի ուս սոցիալ-դեմոկրատների քաղաքականութեան ու տակտիկայի սպեցիֆիկ առանձնահատկութիւնը: Մենք պետք է պահպանենք և ամրապնդենք անընդալ կուսակցութիւնը, — ինչպես վոր նաև հեղափոխութիւնից առաջ: Մենք պետք է մասսաներին անշեղորեն պատրաստենք նոր հեղափոխական կրիզիսի համար, — ինչպես նաև 1897—1903 թվականներին: Մենք պետք է ամեն կերպ ամրապնդենք կուսակցութեան կապը մասսայի հետ, սոցիալիզմի նպատակով դարդացնենք և ոգտագործենք ամեն տեսակ բանվորական կազմակերպութիւնները, — ինչպես վոր միշտ և ամենուրեք բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնները: Մոմենտի սպեցիֆիկ առանձնահատկութիւնն է հանդիսանում հենց հին ինքնակալութեան՝ նոր պատմական խնդիրները ոկոյարբիստական-սահարյուրյա-կային Դոմայի ունութեամբ լուծելու փորձը (և անհաջող փորձը): Այդ պատճառով ել՝ սոցիալ-դեմոկրատների համար տակտիկայի սպեցիֆիկ խնդիր է հանդիսանում այդ Դոմայի ոգտագործումն իր նպատակների համար, հեղափոխութեան իրեաների և սոցիալիզմի իրեաների տարածման նպատակների համար: Ելութիւնն այն չէ, վոր այդ

սպեցիֆիկ խնդիրն առանձնապես բարձր լինի, վոր նա լայն հեռանկարներ բաց անի, վոր նա իր նշանակությամբ հա- վասարվի կամ դոնե մոտենա այն խնդիրներին, վորոնք ծա- ուանում էյին պրոլետարիատի առջև, որինակ, 1905—1906 թվականներին: Վո՛չ: Եյությունն այն է, վոր այդ է այ- սորվա մոմենտի տակտիկայի առանձնահատկությունը, նրա տարբերությունն անցած ժամանակաշրջանից և դալիք ժա- մանակաշրջանից (վորովհետև այդ դալիք ժամանակաշրջա- նը, անշուշտ, մեզ առանձնահատուկ խնդիրներ է բերելու, ավելի բարդ, ավելի բարձր, ավելի հետաքրքրական խնդ- րերներ, քան թե III Դումայի ողտագործման խնդիրը): Չի կարելի տիրապետել արդի մոմենտին, չի կարելի լուծել այն խնդիրների ամբողջ համակցությունը, վոր նա զնում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության առջև, առանց չճշտելու մոմենտի այդ սպեցիֆիկ խնդիրը, առանց սևհա- բյուրյակային—ոկայարրիստական Դուման սոցիալ-դեմոկրա- տական ազիտացիայի գործիքի փոխարկելու:

Ոտզովխտական դատարկարանները շաղակրատում են, որինակ, բոլշևիկները հետևից՝ հեղափոխության փորձը հաշվի առնելու մասին: Բայց նրանք չեն հասկանում, թե ինչ են ասում: Նրանք չեն հասկանում, վոր հեղափոխու- թյան փորձի մեջ է մտնում հեղափոխության իրեալների ու խնդիրների և մեթոդների պաշտպանությունը Դումայի ներ- սից: Չկարողանալ Դումայի ներսից, մեր կուսակցական բանվորների միջոցով, վորոնք կարող են անցնել և վորոնք անցել են այդ Դումայի մեջ, պաշտպանել այդ իրեալները, խնդիրներն ու մեթոդները—նշանակում է՝ չկարողանալ հե- ղափոխության փորձի քաղաքական հաշվառման գործում առաջին քայլն անել (վորովհետև խոսքն այստեղ վերաբե- րում է, իհարկե, վոչ փորձի թեորեական հաշվառմանը, գրքերում և հետադրուություններին մեջ): Այդ առաջին քայ- րով մեր խնդիրն ամենևին և վոչ մի դեպքում չի սպառ- վում: Առաջին քայլից անհամեմատ ավելի կարևոր են յերկ- րորդ և յերրորդ քայլերը, այսինքն՝ մասսաների կողմից արդեն հաշվի առնված փորձը իրեական բազաֆի վերածե- րը՝ պատմական նոր գործողության համար: Բայց յեթե

այդ ոտզովխտական դատարկարաններն իրենք խոսում են «միջհեղափոխական» եպոխայի մասին, ապա նրանք պետք է հասկանային (յեթե նրանք կարողանային մտածել, կարո- դանային դատել սոցիալ-դեմոկրատականորեն), վոր «միջ- հեղափոխական» հենց նշանակում է տարրական, նախնական խնդիրները վորպես որակարգի հարցեր առաջ մղելը: «Միջ- հեղափոխական» է անկայուն, անորոշ դրության բնութա- գիրը, յերբ հին իշխանությունը, համոզվելով, վոր անկարելի յե կառավարել միայն հին գործիքների ողնությամբ, փոր- ձում է ողտագործել նոր գործիքը հին կարգերի ընդհանուր իրադրության մեջ: Դա—ներքուստ—հակասական, անկարելի իրադրության մեջ: Դա—ներքուստ—հակասական, անկարելի մի փորձ է, վորով ինքնակալությունը դարձյալ զնում է, անխուսափելիորեն զնում է դեպի խորտակում, մեզ դար- ձյալ տանում է դեպի 1905 թվականի փառավոր դարաշրջա- նի և փառավոր մարտերի կրկնությունը: Բայց նա այնպես չի ընթանում, ինչպես ընթանում էր 1897—1903 թվական- ներին, ժողովրդին դեպի հեղափոխություն և տանում վաչ այնպես, ինչպես տանում էր մինչև 1905 թվականը: Ահա այդ «վոչ այնպես» պետք է հասկանալ կարողանալ: պետք է կարողանալ ձևափոխել իր տակտիկան, ավելացնելով հե- ղափոխական սոցիալ-դեմոկրատիայի բոլոր հիմնական, ընդհանուր, առաջնակարգ և կարևորագույն խնդիրներին ընդհանուր, առաջնակարգ և կարևորագույն խնդիրներին մեկը, տվյալ մոմենտի, նոր մոմենտի վոչ շատ խոշոր, բայց սպեցիֆիկ խնդիրը—սևհաբյուրյակային Դու- մայի հեղափոխականորեն—սոցիալ-դեմոկրատական ողտա- գործման խնդիրը:

Ինչպես ամեն մի նոր խնդիր, այս խնդիրն ուրիշ խնդ- րերներից ավելի դժվար է թվում, վորովհետև այն մարդ- կանցից պահանջում է վո՛չ թե սերտած լողունների պարզ կրկնություն (ոտզովխտաների և Մաքսիմովի մոտ խելքը այդ կրկնությունից ավելի հեռու չի զնում), այլ վորոշ նախաձեռնություն, մտքի ձկունություն, հնարադրու- թյուն, ինքնուրույն աշխատանք արիզինալ պատմական խնդրի վերաբերմամբ: Բայց իրոք այդ խնդիրն առանձնա- պես դժվար կարող է թվալ միմիայն ինքնուրույն մտածել և ինքնուրույն աշխատել չիմացող մարդկանց. իրոք այդ խնդիրը, ինչպես մոմենտի ամեն մի սպեցիֆիկ խնդիր,

մյուսներին այլևի հեշտ և, վորովհետև նրա վճռելիությունը  
դանվում է հենց այլալ մոմենտի պայմանների մեջ: «Մուր  
և ուժեղացող ունակցիայի» դարաշրջանում վճռել «հրա-  
հանդակահան դպրոցների և խմբերի» խակապես լուրջ դեր-  
վածքի խնդիրը, այսինքն՝ այնպիսի դրվածքի, վորի ժա-  
մանակ նրանք իրոք կապված լինելին մասսայական շարժման  
հետ, իրոք յենթարկվելին նրան, բոլորովին չի կարելի,  
վորովհետև խնդիրը դրված է հիմար ձևով, դրված է այն-  
պիսի մարդկանց կողմից, վորոնք այդ խնդրի ձևակեր-  
պումն արտագրել են մի այլ մոմենտի պայմանները հաշվի  
առնող լավ բրոշյուրից: Իսկ III Դումայում սոցիալ-դեմո-  
կրատների ճառերի, յելույթների, քաղաքականությունը  
մասսայական կուսակցությանն ու մասսայի շահերին յեն-  
թարկելու խնդիրը կարելի յե լուծել: Հեշտ չէ, յեթե  
«հեշտ» դործ համարենք սերտածի կրկնությունը, բայց  
իրագործելի յե: Վորքան ել վոր մենք այժմ լարենք կու-  
սակցության բոլոր ուժերը, մենք չենք կարող վճռել «հրա-  
հանդակահան դպրոցների» սոցիալ-դեմոկրատական (այլ վոչ  
թե անարխիստական) դրվածքի խնդիրը այլալ «միջհեղա-  
փոխական» մոմենտում, վորովհետև այդ խնդրի վճռելիու-  
թյան համար բոլորովին այլ պատմական պայմաններ են  
հարկավոր: Ընդհակառակը, լարելով բոլոր ուժերը՝ մենք  
կվճռենք (և մենք արդեն սկսում ենք վճռել) III Դումայի  
հեղափոխականորեն-սոցիալ-դեմոկրատական ոգտագործման  
խնդիրը, — կվճռենք այն վո՛չ թե նրա համար, ո՛ր, հեռա-  
ցումից վիրավորված և ասածու կողմից գրկված ոտղովիստ-  
նե՛ր ու ուլտիմատիստնե՛ր, վորպեսզի պառլամենտարիզմը  
մի ինչ-վոր բարձր պատվանդանի վրա դնենք, վորպեսզի հըռ-  
չակենք «պառլամենտարիզմ» ինչ ել լինի», այլ նրա հա-  
մար, վորպեսզի այսորվա «միջհեղափոխական» մոմենտին  
համապատասխան «միջհեղափոխական» խնդիրը լուծելուց  
հետո անցնենք այլևի բարձր հեղափոխական խնդիրների  
լուծմանը, վորոնք համապատասխան կլինեն վաղվան, այլե-  
լի բարձր, այսինքն՝ այլևի հեղափոխական մոմենտին:

III

Սուանձնապես կուրյոզ են Մաքսիմովի և Ընկ. այդ

11

1573  
40

տիմար աղաղակները բուլչեիկների «պառլամենտարիզմի  
մապին՝ ինչ գնով ել լինի» — ոտղովիզմի իրական պատմու-  
թյան տեսակետից: Կուրյոզ է այն, վոր պառլամենտարիզ-  
մի չափազանցության մասին աղաղակում ելին հատկապես  
հենց այն մարդիկ, վորոնք ստեղծել և ստեղծում են հա-  
տուկ ուղղություն բացառապես դեպի պառլամենտարիզմն  
ունեցած իրենց վերաբերմունքի հարցի նկատմամբ: Ի՞նչ-  
պես եք կոչում դուք ինքներդ ձեզ, ամենասիրելի Մաքսի-  
մով և Ընկ.: Դուք ձեզ կոչում եք «ոտղովիստներ», «ուլ-  
տիմատիստներ», «բոյկոտիստներ»: Մաքսիմովը մինչև  
այժմ ել չի ազատվել իր ինքնասիրահարությունից, վորպես  
III Դումայի բոյկոտիստ, և իր սակավաթիվ կուսակցական  
յելույթներին անպայման կցում է «բոյկոտիստների զեկու-  
ցող 1907 թ. հուլիսյան կոնֆերենցիայում» ստորագրու-  
թյունը: Մի գրող հին ժամանակներում ստորագրում էր.  
«իսկական պետական խորհրդական և կավալեր»: Մաքսի-  
մովն ստորագրում է՝ «բոյկոտիստների զեկուցող» — է՛վ վոր

այդ ել կավալե՛ր է:  
1907 թվականի հունիսի այն քաղաքական դրության  
ժամանակ, յերբ Մաքսիմովը պաշտպանում էր բոյկոտը,  
սխալը դեռևս բոլորովին, բոլորովին փոքր էր: Բայց յերբ  
1909 թվականի հուլիսին, հանդես գալով յուրատեսակ մա-  
նիֆեստով, Մաքսիմովը շարունակում է հիանալ իր «բոյ-  
կոտիզմով» III Դումայի վերաբերմամբ, ապա այդ արդեն  
բոլորովին հիմար բան է: Թե՛ բոյկոտիզմը, թե՛ ոտղովիզմը,  
թե՛ ուլտիմատիզմը — արդեն այս արտահայտությունները  
միայն նշանակում են ուղղություն ստեղծել դեպի պառլա-  
մենտարիզմն ունեցած վերաբերմունքի հարցից, և միմիայն  
այդ հարցից: Իսկ այդ հարցի վերաբերմամբ ջոկել իրեն,  
չարունակել (յերկու տարի անց այն բանից հետո, յերբ  
կուսակցությունն սկզբունքով վճռե՛լ է այդ գործը) ջոկել  
իրեն այդ հարցի վերաբերմամբ — դա անսահման նեղձակա-  
տության նշան է: Հատկապես նրանք, ովքեր այդպես են  
վարվում, այսինքն՝ թե՛ «բոյկոտիստները» (1909 թվակա-  
նի), թե՛ ոտղովիստները, թե՛ ուլտիմատիստները դրանով  
իսկ ապացուցում են, վոր նրանք սոցիալ-դեմոկրատականո-  
րեն չեն մտածում, վոր նրանք պառլամենտարիզմը բար-



ձրացնում են հատուկ պատվանդանի վրա, վոր անարխիստներին միանգամայն նման՝ նրանք ուղղաբյուռ են ստեղծում առանձին ռեյեպտներին—բոյկոտի յենթարկել այս—ինչ Դուժման, հետ կանչել այս—ինչ Դուժմայից, ուլտիմատում ներկայացնել Դուժմայի այս—ինչ Փրակցիային: Այդպես վարվելն էլ հենց նշանակում է կարիկատուրային բոլշևիկ լինել: Բոլշևիկներին մոտ ուղղութունը վորոշվում է նրանց ընդհանուր հայացքով ուստական հեղափոխութան վրա, և բոլշևիկները հազար անգամ ընդգծել են (կարծես՝ վաղորոք նախազգուշացնելով քաղաքական թերամիտներին), թե բոլշևիկները բոյկոտիցմի կամ մարտականութան հետ նույնացնելը նշանակում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հայացքները անհեթեթ կերպով աղավաղել և դուժեհացնել: Որինակ, մեր հայացքը սոցիալ-դեմոկրատներին՝ III Դուժմային մասնակցելու պարտադրականութան մասին անխուսափելիորեն բղխում է մեր հայացքից արդե՛ մոմենտի նկատմամբ, ինքնակալութան փորձերի նկատմամբ՝ մի առաջընթաց քայլ անել բուրժուական միապետութուն ստեղծելու շանսպահին, Դուժմայի նշանակութան նկատմամբ՝ վորպես համազգային մասշտաբով ներկայացուցչական հիմնարկութան մեջ հակահեղափոխական դասակարգերի կազմակերպութան: Ինչպես վոր անարխիստները շուտ տված պառլամենտական կրետինիցմ են դրսևորում, յերբ նրանք պառլամենտի հարցը ջնկում են ընդհանրապես բուրժուական հասարակութան ամբողջական լրիվ հարցից և փորձում են բուրժուական պառլամենտարիցմի դեմ ուղղված գոռոցներից ուղղութուն ստեղծել (թեև բուրժուական պառլամենտարիցմի քննադատութունը սկզբունքով միատեսակ է բուրժուական մամուլի, բուրժուական սինդիկալիցմի և այլն քննադատութան հետ),—այդպես էլ մեր ոտզովխտները—ուլտիմատիստները—բոյկոտիստները միանգամայն նույնպիսի շուտ տված մենչեիցմ են դրսևորում, յերբ նրանք ջնկվում—դառնում են ուղղութուն Դուժմային ցույց տալիք վերաբերմունքի հարցում, դուժմայական սոցիալ-դեմոկրատական Փրակցիայի շեղումների դեմ պայքարելու միջոցների հարցում (և վոչ թե այն բուրժուական դրականագետներ

րի շեղումների դեմ, վորոնք անցողակի կերպով վաղ են տալիս սոցիալ-դեմոկրատիայի մեջ և այլն):

Պառլամենտական այդ շուտ տված կրետինիցմը հերկուլեսյան սյուների հասավ Մաքսիմովի կողմից քոչարկված Մոսկվայի ոտզովխտներին առնչնորդի հոչակավոր դատողութան մեջ—Փրակցիային հետ կանչելը պետք է ընդգծի, վոր հեղափոխութունը թաղված է: Իսկ Մաքսիմովը չի քաշվում պարզ ճակատով հայտարարելու հրապարակով—«Ոտզովխտները յերբեք (ո՛ր, իհարկե, յերբե՛ք) չեն արտահայտվել ընդհանրապես հակապառլամենտարիցմի իմաստով»:

Ոտզովխտներին այդ քոչարկումը Մաքսիմովի և Ընկ. կողմից—նոր Փրակցիայի Փիզիոնմիայի ամենարնորոշ քննարկից մեկն է, և մենք պետք է ե՛լ ավելի մանրամասն կանգ առնենք այդ դժի վրա, վորովհետև այստեղ անտեղյակ հասարակութունը առանձնապես հաճախ է ընկնում դառնապես դանդատվող հեռացվածների թակարգը: Քոչարկումը, նախ, նրանում է, վոր Մաքսիմովն ու Ընկ. անդադար հայտարարում են, կուրժքները ծեծելով՝ մենք ոտզովխտներ չենք, մենք ամենևի՛ն ոտզովխտների կարծիքներին համամիտ չենք: Յերկրորդ, Մաքսիմովն ու Ընկ. բոլշևիկներին մեղադրում են ոտզովխտների դեմ մղվող պայքարը չափազանցելու մեջ: Կրկնվում է նիշտ և նիշտ ուարչեղելականների (1897—1900 թվականներին) վերաբերմունքի պատմութունը դեպի ուարչեմիսլականները: Մենք եկոնոմիստներ չենք,—բացականչում է յին, կուրժքները ծեծելով ուարչեղելականները,—մենք համամիտ չենք «Рабочая Мысль»-ի հայացքներին, մենք վիճում ենք նրա հետ (ճիշտ այնպես, ինչպես Մաքսիմովը «վիճում էր» ոտզովխտներին՝ հետ), այդ միայն չարամիտ իսկրայականներն են մեզ վրա անհիմն մեղադրանք բարդում, մեզ զրպարտում, «ուուցրել են» եկոնոմիցմը և այլն, և այլն և այլն: Այդ պատճառով էլ՝ ուարչեմիսլականների մեջ—վորոնք բացահայտ և ազնիվ եկոնոմիստներ է յին—կային վոչ օսկավաթիվ մարդիկ, վորոնք մոլորվում է յին անկեղծորեն, առանց իրենց կարծիքը պաշտպանելուց վախենալու, և վոր

րոնց չեը կարելի հարգանք չտածել,—իսկ «Рабочее Де-  
ло»-յի արտասահմանյան կոմպանիայում գերակշռում եր  
սպեցիֆիկ ինտրիզանությունը, հեաքերը վոչնչացնելը,  
տախկնոցի խաղալը, հասարակությանը խաբելը: Ըիշտ և  
ճիշտ նույնպիսի յե հետևողական և բացահայտ ոտզովխա-  
ների (ինչպես կուսակցական շրջաններին հայտնի Վսեյ. և  
Ստան.) վերաբերմունքը դեպի Մաքսիմովի արտասահմա-  
նյան կոմպանիան:

Մենք ոտզովխտոներ չենք,—բղավում ե այդ կոմպա-  
նիան: Բայց ստիպեցեք նրանցից վորևե մեկին միքանի  
խոսք ասել արդի քաղաքական դրության և կուսակցության  
ինդիքներին մասին, և դուք ամբողջութամբ կլսեք բոլոր  
ոտզովխտական դատողությունները միքեջ ջրիկացրած  
(ինչպես տեսանք Մաքսիմովի մոտ) յեզվիտական մանր վե-  
րապահումների, ավելացումների, լուության տալու, մեղ-  
մացումների, խառնաշփոթման և այլն ջրով: Այդ յեզվի-  
տիզմը ձեզ չի ազատում, ո՛ր, անարդարացի հեռացվածներ,  
ոտզովխտական թերամտության մեջ մեղադրվելուց, այլ  
տասնապատկում ե ձեր հանցանքը, վորովհետև քողարկված  
իդեական խառնաշփոթությունը հարյուր անգամ ավելի շատ  
ե այլասերում պրոլետարիատին, հարյուր անգամ ավելի  
շատ ե վնաս հասցնում կուսակցությանը<sup>1</sup>:

Մենք ոտզովխտոներ չենք,—բղավում են Մաքսիմովն ու  
Ընկ.: Մինչդեռ 1908 թվականի հունիսից, դուրս գալով  
«Пролетарий»-ի սեղմ խմբագրությունից, Մաքսիմովը  
պաշտոնական ոպողիցիա կազմեց կոլեկտիվի ներսում,  
պահանջեց և ստացավ դիսկուսիայի ազատություն այդ

<sup>1</sup> Մի փոքրիկ որինակ, վոր է դեպ իլյուստրացիայի յե յենթարկում  
Մաքսիմովի հավաստեցումներն այն մասին, թե իբր միայն «Проле-  
тарий»-ն ե, վոր իր չարամտության պատճառով անհեթեթ բաներ ե  
բարդում ուլտիմատիտոների վրա: 1908 թվականի աշնանը Ալեքսին-  
սկին ներկա յեղավ լեհական օոցիալ-դեմոկրատներին համապումարին և  
այնտեղ ուլտիմատիտակայմ բանածև առջարկեց: Այդ բանը տեղի  
ունեցավ նախքան «Пролетарий»-ում նոր Ֆրակցիայի դեմ վճռական  
կամպանիա սկսելը: Յեկ ի՛նչ: Լեհական օոցիալ-դեմոկրատները ծող-  
րեցին Ալեքսինսկուն և նրա բանածևը՝ ասելով նրան. «Դուք պարզա-  
պես յերկշտ ոտզովխտ եք և ուրիշ վսչինչ»:

ոպողիցիայի համար, պահանջեց և ստացավ ոպողիցիայի  
համար հատուկ ներկայացուցչություն այն կարևորագույն  
դործադիր որդաններում, վորոնք կապված են լրադրի տա-  
բածման, կազմակերպության հետ: Ինքնուտինքյան հասկա-  
նայի յե, վոր հենց այն ժամանակվանից սկսած, այսինքն՝  
ավելի քան մի տարի, բոլոր ոտզովխտոները միշտ ել յեղել  
են այդ ոպողիցիայի շարքերում, վորը համատեղ կազմա-  
կերպել ե ուստական ադենտուրա, համատեղ կարգավորել ե  
ադենտուրայի նպատակներով արտասահմանյան դպրոցը  
(նրա մասին ստորև) և այլն, և այլն:

Մենք ոտզովխտոներ չենք,—բղավում ե Մաքսիմովն ու  
Ընկ.: Մինչդեռ Համառուսական կուսակցական կոնֆե-  
րենցիայում 1908 թվականի դեկտեմբերին, յերբ այդ ոպո-  
ղիցիայի կազմից ավելի ազնիվ ոտզովխտոները ջոկվեցին  
ամբողջ կուսակցության առաջ և հատուկ խումբ կազմե-  
ցին, հատուկ իդեական հոսանք, և իբրև այդպիսին իրա-  
վունք ստացան իրենց հոետորը հանդես բերելու (կոնֆերեն-  
ցիայում վորոշված եր, վոր—ժամանակի սղության պատ-  
ճառով—հատուկ հոետոր կարող են հանդես բերել միայն  
հատուկ իդեական հոսանքները կամ հատուկ կազմակերպու-  
թյունները), ապա ոտզովխտական Ֆրակցիայի հոետորը  
դուրս յեկալ—դուրս պատահական պատճառներով—ընկ. Մաքսիմովը...

Մաքսիմովի արտասահմանյան խումբը սխտեմատիկո-  
րեն այդ ձևով խաբում ե կուսակցությանը՝ ոտզովիզմը  
թաղցնելու միջոցով: 1908 թ. մայիսին ոտզովիզմը բացար-  
ձակ պայքարում պարտություն կրեց. նրան 18 ձայնով  
14-ի դեմ սևացրեց համաքաղաքային կոնֆերենցիան Մոսկ-  
վայում (այդ ոայնում 1907 թվականի հուլիսին համարյա  
առանց բացառության բոլոր օոցիալ-դեմոկրատները բոյ-  
կոտիտոներ եյին, վորոնք սակայն կարողացան, ի տարբե-  
րություն Մաքսիմովից, արդեն 1908 թ. հունիսի մոտերըը  
հասկանալ, վոր III Դումայի «բոյկոտը» պնդելը աններելի  
հիմարություն կլիներ): Դրանից հետո ընկ. Մաքսիմովն  
արտասահմանում կազմակերպում ե Ֆորմալ ոպողիցիա  
«Пролетарий»-ին և սկսում ե, մինչև այն յերբեք չկիրառ-

ված, մի գիտելուսիա բուլլեիկյան պարբերական որդանի եջերում: Յեւ ահա, յերբ 1908 թվականի աշնանը, Համա-  
ուսական կոնֆերենցիայի ընտրությունների ժամանակ,  
Պետերբուրգի ամբողջ կազմակերպությունը բաժանվում է  
ոտզովխտաների և նեգովխտաների (բանվորների արտահայ-  
տությունը), յերբ Պետերբուրգի բոլոր ուսուցիչներում և  
յենթաուսուցիչներում գիտելուսիա յե մղվում վո՛չ թե բուլլե-  
վիկների ու մենշևիկների պլատֆորմի շուրջը, այլ ոտզո-  
վխտաների և նեգովխտաների, այդ ժամանակ ոտզովխտաների  
պլատֆորմը բազմվում է հասարակութայն աշքերից: Այն  
չեն հաղորդում «Пролетарий»-ին: Այն չեն հրատարակում  
մամուլում: 1908 թվականի դեկտեմբերին Համաուսական  
կոնֆերենցիային այն չեն հաղորդում: Միայն կոնֆերենցիա-  
յից հետո, խմբագրության յեռանդալին պահանջներով, այդ  
պլատֆորմը հասցվեց մեզ և մեր կողմից ապագրվեց  
«Пролетарий»-ի № 44-ում («Պետերբուրգի ոտզովխտաների  
բանաձևը»):

Մոսկվայի մարզում ոտզովխտաների բոլորին հայտնի  
առաջնորդը «խմբագրել է» «Рабочее Знамя»-յի № 5-ում  
վեանկված՝ բանվոր ոտզովխտի հոգվածը, բայց առաջնոր-  
դի սեփական պլատֆորմը մենք մինչև այժմ չենք ստացել:  
Մեզ շատ լավ հայտնի յե, վոր դեռ 1909 թվականի դարնա-  
նը, յերբ պատրաստություններ եյին տեսնվում կենտրոնական  
արդյունարերական ուսուցիչ մարզային կոնֆերենցիայի հա-  
մար, ոտզովխտաների առաջնորդի պլատֆորմը կարդացվում  
և ձեռքից ձեռք եր անցնում: Մեզ հայտնի յե բուլլեիկների  
հաղորդագրություններից, վոր այդ պլատֆորմում վոչ-  
սոցիալ-դեմոկրատական դատողության անհամեմատ ավելի  
չատ մարզարիտներ կային, քան թե Պետերբուրգի պլատ-  
ֆորմի մեջ: Բայց պլատֆորմի տեքստը մեզ այնպես ել  
չուղարկեցին, — հայտնորեն՝ նույնպես նույնքան պատահա-  
կան, միանշամայն պատահական պատճառներով, վորոնցով  
Մաքսիմովը խոսում եր կոնֆերենցիայում՝ լրագրված ոտ-  
զովխտաների ֆրակցիայի կողմից:

Լեզալ հնարավորությունների ոգտագործման հարցը  
Մաքսիմովն ընկ. հետ նույնպես սքողեցին մի «հղկած»

Ֆրագով այն մասին, վոր այդ երբ «ինքնըստինքյան հաս-  
կանալի յե»: Հետաքրքրական կլիներ իմանալ՝ «արդյոք  
ինքնըստինքյան հասկանալի յե» այդ այժմ նաև Մաքսիմովի  
ֆրակցիայի պրակտիկ առաջնորդներ ընկ. ընկ. Լյադովի և  
Սուանիսլավի համար, վորոնք սրանից դեռ յերեք ամիս  
առաջ բանաձև անցկացրին այն ժամանակ նրանց ձեռքում  
գտնված կենտրոնական-արդյունարերական մարզի Մարզա-  
յին Բյուրոյում (Մարզային Բյուրոյի հենց այն կազմի, վոր  
հաստատեց տերահոչակ «գալոցը». Մարզային Բյուրոյի  
կազմն այժմ վոխվել է) ընդդեմ սոցիալ-դեմոկրատների  
մասնակցութայն ֆարքիկա-գործարանային բժիշկների հա-  
մագումարում: Ինչպես հայտնի յե, այդ առաջին համա-  
գումարն եր, վորտեղ հեղափոխական սոցիալ-դեմոկրատ-  
ները մեծամասնություն եյին: Յեւ այդ համագումարին  
մասնակցելու դեմ ազիտացիա եյին անում բոլոր ականա-  
վորագույն ոտզովխտաներն ու ուլտիմատիստները, նրան  
մասնակցելը հայտարարելով «դավաճանություն պրոլե-  
տարիատի գործին»: Իսկ Մաքսիմովը ջնջում է հետքերը—  
«ինքնըստինքյան հասկանալի յե»: «Ինքնըստինքյան հասկա-  
նալի յե», վոր ավելի անկեղծ ոտզովխտաներն ու ուլտիմա-  
տիստները բացահայտորեն ջրատում են պրակտիկ աշխա-  
տանքը Ռուսաստանում, իսկ Մաքսիմովը և ընկ., վորոնց  
քունը փախցրել են Կրիչևսկու և Մարտինովի դախինեն-  
քունը, գործի եյությունը կոծկում են. վո՛չ մի տարածայնու-  
թյուն չկա, լեզալ հնարավորություններն ոգտագործելու  
վոչ մի հակառակորդ չկա:

Սրատասահմանյան կուսակցական որդանների, հաղոր-  
դակցությունների կազմակերպման վերաբերյալ արտասահ-  
մանյան խմբերի և այլոց վերականգնումն անխուսափելիու-  
րեն տանում է նաև դեպի հին չարարկությունների կրկնու-  
թյունը, վորոնց դեմ անհրաժեշտ է պայքարել ամենաան-  
խնա կերպով: Ամբողջությամբ կրկնվում է «եկոնոմիստնե-  
րի» պատմությունը, վորոնք Ռուսաստանում ազիտացիա  
եյին մղում քաղաքական պայքարի դեմ, իսկ արտասահմա-  
նում քողարկվում եյին «Рабочее Дело»-յով: Ամբողջու-  
թյամբ կրկնվում է բուրժուական-դեմոկրատական «կրեդո-

յի» (կրեդո—հավատո հանգանակ) պատմութիւնը, վորը Ռուսաստանում պրոպագանդա ելին անում Պրոկոպովիչն ու Ընկ. և վորը հեղինակների կամքի հակառակ մամուլում հրատարակվեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատներէ կողմից: Կուսակցութեանն ավելի ալլասերող վոչ մի ուրիշ բան չկա, քան այդ տարիկնոցի խաղալը, քան անլեզալ աշխատանքի ծանր պայմաններէ այդ ողտաղործումը կուսակցական հրապարակայնութեան դեմ, քան այդ յեզվիտիզմը, յերբ Մաքսիմովն ու Ընկ., ամբողջութեամբ ու ամեն ինչում ձեռք-ձեռքի տված գործելով ոտզովիտներէ հետ, մամուլէ մեջ իրենց կուրծքն են ծեծում, հավատացնելով, վոր այդ ամբողջ ոտզովիզմը գիտմամբ է ունցվում «Пролетарий»-ի կողմից:

Մենք պատրվակաղործներ չենք, Ֆորմալիստներ չենք, այլ հեղափոխական աշխատանքի մարդիկ: Մեզ համար կարեւոր չեն բառային տարբերութիւնները, վոր կարելի չէ սահմանել ոտզովիզմի, ուլտիմատիզմի, (III Գումայի) «բոլկոտիզմի» միջև: Մեզ համար կարեւոր է սոցիալ-դեմոկրատական պրոպագանդայի և ագիտացիայի իրական բովանդակութիւնը: Յեւ յեթե, բոլշևիզմի ներքո թաղնված, ուսակցական անլեզալ խմբակներում այնպիսի հայացքներ են բարոզվում, վորոնք վոչ մի ընդհանուր բան չունեն վո'չ բոլշևիզմի, վո'չ էլ սոցիալ-դեմոկրատիզմի հետ ընդհանրապես, ապա այն մարդիկ, վորոնք խանգարում են այդ հայացքներէ լիակատար մերկացմանը, նրանց սխալ յինելն ամբողջ կուսակցութեանն առջև լիովին պարզարանելուն, այդպիսի մարդիկ վարվում են վորպես պրոլետարիատի թշնամիներ:

#### IV

Աստիճաշինարարութեան հարցում այդ մարդիկ իրենց նույնպես ցույց տվին: «Пролетарий»-ի ընդլայնված խմբագրութիւնը ընդունեց և հրատարակեց այդ հարցի մասին յերկու բանաձև. մեկը՝ գործի ելութեան վերաբերմամբ, մյուսը՝ հատկապես Մաքսիմովի բողոքի առթիվ: Հարց է առաջ դարձաւ, ի՞նչ է ասում այժմ այդ Մաքսիմովի իր «Հաշվեալութեան» մեջ: Նա «Հաշվեալութիւն» է գրում նրա

համար, վորպեսզի հետքերը ջնջի—այն դիպումատի վոզով միանգամայն, վորն ասում էր, թե լեզուն մարդուն նրա համար է տրված, վորպեսզի թագցնի իր մտքերը: Տարածվում են ինչ-վոր «սխալ տեղեկութիւններ» Մաքսիմովի կոմպանիայի «իրբ թե աստիճաշինարարական» ուղղութեան մասին, և ուրիշ վոչինչ:

«Սխալ տեղեկութիւններ»,—ասում էք Գուք: Ո՛ր, վո'չ, ամենասիրելի'ս, Գուք այստեղ հենց նրա համար էք հետքերը ջնջել, վոր հիանալի գիտեք աստիճաշինարարութեան վերաբերմամբ «Пролетарий»-ի ունեցած «տեղեկութիւններ» լիակատար ճշմարտութիւնը: Գուք հիանալի գիտեք, վոր այդ «տեղեկութիւնները», ինչպես վոր այն շարադրված էլ է հրապարակված բանաձևում, վերաբերում են ամենից առաջ այն գրական յերկերին, վորոնք բղխում են մեր դրական կոմպանիայից: Այդ գրական յերկերն ամենալիակատար ճշգրտութեամբ մատնանշված են մեր բանաձևում. նրա մեջ չի ավելացրած միայն,—չեր կարող ավելացվել բանաձևում,—վոր մոտ տարի ու կես է, վոր բոլշևիզմի գեկալար շրջաններում ամենատեղին դժգոհութիւն է արտահայտվում մեր գիտակիցներէ «աստիճաշինարարութեան» վերաբերյալ, և վոր հենց այդ հողի վրա (բացի վերևում մատնանշված հողից)՝ կարեկատուբային բոլշևիզմի նոր Ֆրակցիան թունավորում էր մեզ համար աշխատանքի ամեն մի հնարավորութիւն իր խուսափանքներով, հնարամտութիւններով, բծախնդրութիւններով, հավանութիւններով, կլյաուզաներից ամենանշանավորներից մեկն առանձնապես լավ հայտնի յէ Մաքսիմովին, վորովհետև դա գրված է պաշտոնապես «Пролетарий»-ի խմբագրութիւնը մտցրած բողոքն է ընդդէմ «Не по дороге» հոդվածի գետեղման («Пролетарий» № 42): Գուցե ա՞յդ էլ «սխալ տեղեկութիւններ» են, ո՛ր, անարդարացի հեռացված: Գուցե այդ էլ «իրբ թե բողոք» էր:

Վո'չ, գիտե՞ք ինչ, հետքերը վոչնչացնելու քաղաքականութիւնը միշտ չի հաջողվում, իսկ մեր կուսակցութեան մեջ այն ձեզ յերբեք չի հաջողվի: Կարեք չկա տարի-

կրնոցի խաղալ և կոտորատիւով փորձել դադանի դարձնել  
այն, ինչ վոր հայտնի յե ամեն մեկին, ով հետաքրքրուած  
է ուսական գրականութեամբ և ուսական սոցիալ-դեմո-  
կրատիայով: Կա գրականագետներ զի կոմպանիա, վոր  
մեր լեզու գրականութեանը միջանի բուրժուական հրատա-  
րակչութեանն յոչնութեամբ հեղեղում է աստվածաշինա-  
բարութեան սխտեմատիկ քարոզով: Այդ կոմպանիային է  
պատկանում նաև Մաքսիմովը: Այդ քարոզը սխտեմատիկ  
է դարձել հատկապես վերջին մեկուկես տարվա ընթաց-  
քում, յերբ ուսական բուրժուազիային իր հակահեղափո-  
խական նպատակներէ համար պետք յեղավ աշխուժացնել  
կրոնը, բարձրացնել կրոնի պահանջը, կրոն հորինել, ժո-  
ղովրդին պատմաստել կամ ժողովրդի մեջ նոր ձևով ամրա-  
պնդել կրոնը: Այդ պատճառով էլ աստվածաշինարարու-  
թեան քարոզը հասարակական, քաղաքական ընույթ ձևաք  
բերեց: Ինչպես վոր հեղափոխութեան ժամանակաշրջանում  
բուրժուական մամուլը պաշտում ու պաշտպանում էր ամենից  
այնի յեռանդուն մենչեիկներին նրանց կազեստասիրութեան  
համար, այդպես էլ հակահեղափոխութեան ժամանակաշրջ-  
անում բուրժուական մամուլը պաշտում ու պաշտպանում է  
աստվածաշինարարներին—կատարել էք կարծում—մարք-  
սիստներէ շրջանից և մինչև անգամ «նույնպես բոլշեիկնե-  
րի» շրջանից: Յե՛վ յերբ բոլշեիկմի պաշտոնական որդանը  
խմբագրական հոդվածում հայտարարեց, վոր բոլշեիկմն  
այդպիսի պրոպագանդայի հետ մի քանապարհով ընթանալ  
չի կարող (այդ հայտարարութեանը մամուլում արվեց այն  
բանից հետո, յերբ անհաջող անցան նամակներէ և անձնա-  
կան խոսակցութեաններէ միջոցով արված անխիղճ փորձե-  
րը՝ դրդելու, վոր դադարեցնեն խայտառակ քարոզը),—  
այն ժամանակ ընկ. Մաքսիմովը Փորձալ գրաւոր բողոք  
ներկայացրեց «Пролетарий»-ի խմբագրութեանը: Նա, Մաք-  
սիմովը, ընտրված է Լոնդոնի համագումարի կողմից, և  
այդ պատճառով նրա «ձեռք բերած իրաւունքը» խախտել են  
նրանք, ովքեր համարձակվել են պաշտոնապես հրաժարվել  
աստվածաշինարարութեան խայտառակ քարոզից: «Այս ի՞նչ  
է, մեր Փրակցիան աստվածաշինարարական գրականագետ-  
ների ստրկութեան մե՞ջ է, ի՞նչ է»: Այս գիտողութեանը

գուրս թուով խմբագրատանը տեղի ունեցած բուռն տեսա-  
րանի ժամանակ ընկ. Մարատի բերանից, — այո՛, այո՛,  
հենց նույն այն ընկ. Մարատի, վորն այնքան համեստ է,  
բարյացակամ, հաշտարար, բարեսիրտ, վոր մինչև այժմ էլ  
չի կարողանում մի լավ վորոշել՝ բոլշեիկներէ՞ հետ գնա  
արդյոք, թե՞ աստվածային սողովիտներէ:

Կամ, գուցէ, այս բոլորը նույնպես «սխալ տեղեկու-  
թեաններ են», ո՛ր, անարդարացի հեռացված Մաքսիմով:  
Չկա՞ աստվածաշինարարական գրականագետների վոչ մի  
կոմպանիա, Ձեր կողմից չի՞ յեղել վոչ մի պաշտպանու-  
թեան նրանց վերաբերմամբ, չի՞ յեղել Ձեր բողոքը «He по  
дороге» հոդվածի դեմ, հը՞:

Աստվածաշինարարական ուղղութեան վերաբերմամբ  
յեղած «սխալ տեղեկութեաններ» մասին ընկ. Մաքսիմովը  
խոսում է իր «Հաշիտութեան» մեջ արտասահմանյան  
դպրոցի առթիվ, վոր կազմակերպում է նոր Փրակցիան:  
Ընկ. Մաքսիմովն այնքան ուժգնորեն է ընդդէմում այդ  
«առաջին (ընդդէմումը Մաքսիմովին է) կուսակցական դըպ-  
րոցի կազմակերպումը արտասահմանում», այնքան ուժգնու-  
րեն է այդ հարցի առթիվ հասարակութեանը քթից բռնած  
պար ածում, վոր հարկ կա ավելի մայնրամասն խոսելու  
տիրահոջակ «դպրոցի» մասին:

Ընկ. Մաքսիմովը դառնապես գանդատվում է.

«Խմբագրութեան («Пролетарий»-ի) կողմից վոչ մի փորձ չի արվել  
վո՛չ միայն դպրոցին աջակցութեան ցույց տալու, այլ թեկուզ նույնիսկ  
էր՝ ձեռքը վերցնելու նրա վերահսկողութեան գործը. տարածելով ան-  
հայտ է թէ վորտեղից ձեռք բերած սխալ տեղեկութեանները դպրոցի  
մասին, խմբագրութեանը դպրոցի կազմակերպիչներին վոչ մի հարցում  
չարեց՝ այդ տեղեկութեաններն ստուգելու նպատակով: Այսպես էր  
խմբագրութեան վերաբերմունքը դեպի այս ամբողջ գործը»:

Այդպես: Այդպես: «Վոչ մի փորձ, թեկուզ իր ձեռքը  
վերցնելու դպրոցի վերահսկողութեանը»... Մաքսիմովի  
յեզովիտիզմն այս Փրակցում մինչև այնտեղն է հասել, վոր  
մերկացնում է ինքն իրեն:

Հիշեցե՛ք, ընթերցող, Յերողինյան հանրակացարանը  
առաջին Դոմայի եպիստոլում: Պաշտոնաթող գեմակի նա-  
չարնիկ (կամ ինչ-վոր ընդհանրապես այդ տեսակի մի աս-

տիճանափոխ կալալեր) Յերոզիմը Պետերբուրգում կազմակերպեց մի հանրակացարան՝ յեկվոր գյուղացիական դեպուտատների համար, ցանկանալով աջակցութիւն ցուց տալ «կառավարութեան նկատառումներին»: Անփորձ գյուղական մուշիկները, մայրաքաղաք գալով, ընկնում էին Յերոզիմի հանրակացարանը, վորտեղ, իհարկէ, դպրոց էին գտնում, վորի մեջ հերքվում էին «ձախերի» աղճատված ուսմունքները, կեղտ եր թափվում արուղովիկների գլխին և այլն, վորի մեջ Դուժայի նորաթուխ-անդամներին սովորեցնում էին «խոհական-ուսական» պետական գերիմաստութիւնը: Բարեբախտաբար, Պետական Դուժայի Պետերբուրգում գտնվելը հարկադրեց Յերոզիմին հենց Պետերբուրգում ել կազմակերպել իր հանրակացարանը, իսկ վորովհետև Պետերբուրգը իրենական և քաղաքական կյանքի բավականաչափ լայն ու ազատ կենտրոն է, ուստի Յերոզիմիան դեպուտատներն, իհարկէ, շատ շուտով սկսեցին հեռանալ Յերոզիմիան հանրակացարանից և անցնել արուղովիկների բանակը կամ ինքնուրույն դեպուտատների բանակը: Յերոզիմի հնարանից խայտառակութիւնը դուրս յեկալ թե՛ իրեն համար և թե՛ կառավարութեան համար:

Հիմա պատկերացրե՛ք ձեզ, ընթերցող, վոր սրան նման Յերոզիմիան հանրակացարան է սարքված վո՛չ թե վորեւէ արտասահմանյան Պետերբուրգում, այլ վորեւէ արտասահմանյան Յարեվոկոկչայսկում: Յեթե դուք այդ պատկերացնեք ձեզ, ապա դուք պետք է համաձայնեք, վոր սոցոմիտական-աստվածաշինարարական յերոզիմները Յեվրոպային իրենց ծանոթ լինելն ոգտագործել են նրա համար, վորպէսզի իսկական-ուսական Յերոզիմից ավելի խորամանկ դուրս գան: Մարդիկ, վորոնք իրենց բոլլեիկ են անվանում, ժողովել են իրենց դրամարկղը, —անկախ այն միակ, վորքան մենք գիտենք, ընդհանուր բոլլեիկյան դրամարկղից, վորից հոգացվում են «Пролетарий»-ի հրատարակման և տարածման ծախքերը, —կազմակերպել են իրենց գործակալութիւնը, «իրենց» միջանի ազխատորներին տարել են Յարեվոկոկչայսկ, միջանի կուսակցական սոցիալ-դեմոկրատ բան-

վորները տարել են այնտեղ և հոչակել են այս (կուսակցութիւնից Յարեվոկոկչայսկում թաղցրած) Յերոզիմիան հանրակացարանը «աւալին կուսակցական» (կուսակցական—վորովհետև թաղցրած է կուսակցութիւնից) «գպրոցն արտասահմանում»:

Շտապում ենք վերապահութիւն անել—նկատի ունենալով այն, վոր հեռացված ընկ. Մաքսիմովն առանձին յեռանդով հարց բարձրացրեց՝ որինակո՞ն է, թե հակաորինական նրա հեռացումը (այդ հարցի մասին ստորև)—շտապում ենք վերապահութիւն անել, վոր սոցոմիտական-աստվածաշինարարական յերոզիմները գործելակերպի մեջ միանգամայն վոչ մի «հակաորինական» բան չկա: Բացարձակապէս վոչինչ: Այդտեղ ամեն ինչ որինական է: Որինական է այն, վոր կուսակցութեան մեջ յեղած համախոհները խմբավորվում են միասին: Որինական է այն, վոր համախոհները դրամարկղ են ժողովում և մի ընդհանուր պրոպագանդիստական-ազխտացիոն ձեռնարկութիւն են սկսում: Որինական է այն, վոր նրանք վորպէս այդ ձեռնարկութեան ձեցանկանում են ընտրել տվյալ մոմենտին, որինակի համար ասենք, վո՛չ թե լրագիրը, այլ «գպրոցը»: Որինական է այն, վոր նրանք այդ գպրոցը պաշտոնապէս կուսակցական համարում, քանի վոր այն կազմակերպում են կուսակցութեան անդամները, և քանի վոր կա թեկուզ մի, կուսակցութեան ինչպիսի կազմակերպութիւն ուզում է լինի, վոր իր վրա յի վերցնում այդ ձեռնարկութեան քաղաքական և իրենական պատասխանատվութիւնը: Ամեն ինչ այստեղ լիովին որինական է և ամեն ինչ շատ լավ կլիներ, յեթե... յեթե չլիներ յեղվիտիզմը, յեթե չլիներ կեղծավորութիւնը, յեթե չլիներ իր սեփական կուսակցութեանը խաբելը:

Մի՞թե կուսակցութեանը խաբել չէ այդ, յեթե դուք հրապարակայնորեն ընդգծում եք գպրոցի կուսակցականութիւնը, այսինքն՝ սահմանափակվում եք նրա Փորձալ յեթաթաորինականութեան հարցով և չեք տալիս գպրոցի նախաձեռնողների և կազմակերպիչների անուկները, այսինքն՝ լուծում եք գպրոցի իրենական-քաղաքական ուղղութեան մասին, իբրև մեր կուսակցութեան նոր ֆրակցիայի ձեռնար-

կության: «Пролетарий»-ի խմբագրութեան մեջ յերկու «թուղթ» կար այդ դպրոցի մասին (խմբագրութեան հարաբերութեանը Մաքսիմովի հետ արդեն մի տարուց ամէլէ յետեւ, ինչ տեղի յեն ունենում վոչ այլ կերպ, քան թե «թղթեր» և դիպլոմատիական հուշագրերի ոգնութեամբ): Առաջին թուղթն ամենեւին ստորագրված չէր, բացարձակապէս վոչ վոքի կողմից ստորագրված չէր—լուկ դատողութուն եր լուսավորութեան ոգտակարութեան և դպրոց կոչված հիմնարկների լուսավորական նշանակութեան մասին: Յերկրորդ թուղթը ստորագրված եր փոխանձերի կողմից: Այժմ, հասարակութեան առջև հանդես գալով մամուլում «արտասահմանում առաջին կուսակցական դպրոցի» գովաբանութեամբ, ընկ. Մաքսիմովը առաջիկա նման լուրքյան ե տալիս զըպրոցի ֆրակցիոնն ընույթը:

Յեզվխտիզմի այդ քաղաքականութեանը վնասում և կուսակցութեանը: Այդ «քաղաքականութեանը» մենք կմերկայենք: Դպրոցի նախաձեռնողներն ու կազմակերպիչները հանդիսանում են իրոք ընկերներ «Յերը» (այսպէս անվանենք Մոսկվայի ոտգովխտների՝ կուսակցութեան մեջ բոլորին հայտնի առաջնորդին, վոր ուֆերաաներ եր կարողում դպրոցի մասին, կազմակերպել եր աշակերտների դպրոցը և միջանի բանվորական խմբակների կողմից դասախոս ընտրել), Մաքսիմովը, Լուսաչարսկին, Լյադովը, Ալեքսինսկին և այլն: Մենք չզիտենք և չենք հետաքրքրվում իմանալու, թե, մասնավորապէս, ինչ դեր են խաղացել այդ ընկերներից մեկը կամ մյուսը, ինչպէս են տեղավորված նրանք դպրոցի զանազան պաշտոնական հիմնարկներում, նրա «նորհրդում», նրա «գործադիր հանձնաժողովում», նրա դասախոսական կոլեգիայում և այլն: Մենք չզիտենք, թե ինչպիսի «վոչ-ֆրակցիոն» ընկերներ կարող են այս կամ այն առանձին դեպքում լրացնել այդ կամպանիան: Այդ ամենը միանգամայն անկարևոր է: Մենք պնդում ենք, վոր այդ դպրոցի իրական իդեական-քաղաքական ուղղութեանը, վորպէս նոր ֆրակցիոն կենտրոնի, վորոշվում է հենց հիշատակված անուններով և վոր, այդ բանը ծածկելով կուսակցութեանից, Մաքսիմովը յեզվխտիզմի քաղաքականութեանը

է վարում: Այն չէ վատը, վոր կուսակցութեան մեջ նոր ֆրակցիոն կենտրոն և առաջացել, —մենք ամենեւին այն մարդկանց շարքին չենք պատկանում, վորոնք պատրաստ են իրենց համար քաղաքական կապիտալ կազմել ֆրակցիոնութեան դեմ արձակած եթանագին-պոպուլար աղաղակներով, —ընդհակառակը, այդ լավ է, վոր կուսակցութեան մեջ հատուկ արտահայտութեան հնարավորութեան և ստացել հատուկ յերանգը, քանի վոր այդպիսին դոյութեան ունի: Վասն այն է, վոր խաբվում է կուսակցութեանը և խաբվում են նաև բանվորները, վորոնք, ինքնբարեկրկան հասկանալի չէ, համակրանքով են վերաբերվում ամեն մի դրպրոցի, ինչպէս ամեն մի լուսավորական ձեռնարկութեան:

Մի՞թե կեղծավորութեան չէ այդ, յերբ ընկ. Մաքսիմովը դանդաղում է հասարակութեանը, թե «Пролетарий»-ի խմբագրութեանը «մինչև անգամ» չցանկացավ («մինչև անգամ») «իր ձեռքը վերցնել դպրոցի վերահսկողութեանը»: Մտածեցե՛ք միայն. 1908 թվի հունիսին ընկ. Մաքսիմովը դուրս յեկավ «Пролетарий»-ի սեղմ խմբագրութեանից, այն ժամանակվանից համարյա անընդհատ հազարավոր ձեռքով ներքին պայքար է տեղի ունենում բոլշևիկյան ֆրակցիայում. Ալեքսինսկին՝ արտասահմանում, չեիկյան ֆրակցիայում. Ալեքսինսկին՝ արտասահմանում, «Յերը» և Ընկ.՝ արտասահմանում և Ռուսաստանում հազարավոր կերպերով Մաքսիմովի հետեից կրկնում են բոլոր ոտգովխտական-աստիճանաշինարարական բարեհիմարութեանները «Пролетарий»-ի դեմ: Մաքսիմովը դրավոր և ֆորմալ բողոքներ է ներկայացնում «Не по дороге» հողվածի դեմ. բողոքիչների գալիք անխուսափելի պատկտման մասին խոսում են բոլորը, ուրքեր թեկուզ միայն լսելով են ծանոթ կուսակցական գործերին (բավական է մասնանշել, վոր մենշևիկ Դանը 1908 թվականի դեկտեմբերի Համառուսական կոնֆերենցիայում պաշտոնական ժողովում է լուրս ամենի հայտարարեց. «Ո՞վ չզիտե, վոր բողոքիչներն այժմ Լենինին մեղադրում են բողոքիզմին դավաճանելու մեջ»), — իսկ ընկ. Մաքսիմովը, անմեղի դեր խաղալով, դե բողոքովին անմեղ յերեխայի, հարց է տալիս ամենահարգելի հասարակութեանը. այդ ինչո՞ւ համար «Пролетарий»-ի խմբ-

բազմութիւնը չցանկացաւ «նույնիսկ» իր ձեռքն առնել կուսակցական դպրոցի վերահսկողութիւնն աստվածաշինարարական Յարեւոյնի շառնիքով: Դպրոցի «վերահսկողութիւնը»: «Пролетарий»-ի կողմնակիցները վորպես «Ինսպեկտորներ», վորոնք ներկա յեն լինում Մաքսիմովի, Լունաչարսկու, Սլեզարինսկու և Ընկ. դասախոսութիւններին: Դե լավ, ի՞նչ կարիք կար այդ անարժան, խայտառակ կատակերգութիւնը խաղալու: Ինչի՞ յեր պետք: Ինչո՞ւ հասարակութեան աչքերին թող փչել՝ ուղարկելով «դպրոցի» վոչինչ չասող «ծրագրերն» ու «հաշվետուութիւնները», վոխանակ ուղղակի և բացահայտ կերպով ընդունելու նոր Ֆրակցիոն կենտրոնի իրեական ղեկավարներին ու վոգելընչողներին:

Ինչի՞ յեր պետք—մենք իսկույն կտանք այդ հարցի պատասխանը, իսկ առայժմ վերջացնենք դպրոցի վերաբերյալ հարցը: Յարեւոյնի շառնիքը կարող է տեղավորվել Պետերբուրգում և տեղափոխվել (գոնե իր մեծ մասով) Պետերբուրգ, բայց Պետերբուրգը չի կարող վո՛չ տեղավորվել Յարեւոյնի շառնիքում, վո՛չ ել տեղափոխվել Յարեւոյնի շառնիք: Ով նոր կուսակցական դպրոցի աշակերտներին մի քիչ ավելի յեռանդուն է, ավելի ինքնուրույն, նա կարող է իրեն համար ճանապարհ գտնել նոր սեղմ Ֆրակցիայից դեպի լայն կուսակցութիւնը, ոտը վիտաների և աստվածաշինարարների «գիտութիւնից» դեպի սոցիալ-դեմոկրատիզմի գիտութիւնն ընդհանրապես և բոլշևիզմի գիտութիւնը՝ մասնավորապես: Իսկ ով ցանկանում է սահմանափակվել յերոզինյան լուսավորութեամբ, նրա հետ գործ բռնելն անողու է: «Пролетарий»-ի խմբագրութիւնը պատրաստ է ամեն տեսակ ոգնութիւն ցույց տալ և ամեն տեսակ ոգնութիւն ցույց կտա բոլոր բանվորներին, ինչ հայացքներ տեր էլ լինեն նրանք, յեթե նրանք ցանկանան արտասահմանյան Յարեւոյնի շառնիքի տեղափոխվել (կամ գալ) արտասահմանյան Պետերբուրգ և ծանոթանալ բոլշևիզմի հայացքների հետ: Իսկ «առաջին արտասահմանյան կուսակցական դպրոցի» կազմակերպիչների և նախաձեռնողների կեղծավոր քաղաքականութիւնը մենք կմերկացնենք ամբողջ կուսակցութեան առջև:

Ինչի յեր պետք Մաքսիմովի այդ ամբողջ կեղծավորութիւնը—հարցը մենք և այդ հարցի պատասխանը հետաձգեցինք մինչև դպրոցի մասին խոսակցութիւնը վերջացնելը: Բայց, խտտրեն ասած, այստեղ պարզաբանման արժանի յե վոչ թե «ինչի՞ յեր պետք» հարցը, այլ «ինչո՞ւ համար» հարցը: Սխալ կլինեն կարծել, թե կեղծավոր քաղաքականութիւն են վարում նոր Ֆրակցիայի անդամները գիտակցաբար վորոչ նպատակի համար: Վո՛չ: Գործի դրութիւնն այնպես է, վոր այդ Ֆրակցիայի բուն իսկ դրութեան մեջ, նրա հանդես գալու և նրա գործունեութեան պայմաններում կան պատճառներ (վոր չեն գիտակցում շատ ոտը վիտաներ և աստվածաշինարարներ), վորոնք կեղծավոր քաղաքականութիւն են ծնում:

Վաղուց արդեն ասված է, թե կեղծավորութիւնը մի տուրք է, վոր մոլութիւնը վճարում է առաքինութեանը: Բայց այդ ասույթը վերաբերում է անհատական բարոյախոսութեան բնագավառին: Իրեական-քաղաքական ուղղութիւնները վերաբերմամբ պետք է առել, վոր կեղծավորութիւնն այն ծածկույթն է, վորից կառուցում են ներքուստ վոչ-միտաեռ, այսպէս, պատահաբար խոսք մեկ արած տարրերից կազմված խմբերը, վորոնք իրենց թույլ են զգում բացահայտ կերպով, ուղղակի հանդես գալու համար:

Նոր Ֆրակցիայի կազմը վորոչում է այն, վոր նա կառուցեց այդ ծածկույթից: Աստվածային ոտը վիտաների Ֆրակցիայի շտաբը կազմում են չճանաչված փելիսոփաները, ծաղրի յենթարկված աստվածաշինարարները, անարխիստա-մեջ մերկացված ոտը վիտաները, խճճված ուլտիստիստ-մեջ մերկացված ոտը վիտաները, խճճված ուլտիստիստ-մեջ մերկացված ոտը վիտաները, վերջապես այն (բոլշևիզմի Ֆրակցիայի մեջ, բարեները, վերջապես այն (բոլշևիզմի Ֆրակցիայի մեջ, բարեները, սակավաթիվ) մարտականները, վորոնք իրենց արժանապատուութիւնից ստոր համարեցին անցնել հեղափոխական սոցիալ-դեմոկրատական աչքի չընկնող, համեստ, արտաքին փայլից ու «պայծառութիւնից» զուրկ աշխատանքի, վոր համապատասխաներ «միջհեղափոխական» եպոխայի պայմաններին ու «խնդիրներին», և վորոնց բա-



րեւարում ե Մաքսիմովը «սլայծառ» Փրագով հրահանգչա-  
կան դպրոցները և խմբերը մասին... 1909 թվականին:  
Միակ բանը, վոր այդ տարակալիբր տարրերին ամբողջ  
համախմբում ե ներկա ըսպելին, դա—ջերմ ատելությունն  
ե դեպի «Пролетарий»-ն և սրա ձեռք բերած լիովին ար-  
ժանի ատելությունն այն բանի համար, վոր այս տարրերի  
վոչ մեկ փորձը՝ իրենց արտահայտությունն ստանալու  
«Пролетарий»-ում, կամ թեկուզ իրենց կողմնակի ճանա-  
չումը, կամ ամենափոքրիկ պաշտպանություն ու քողար-  
կում—յերբեք առանց ամենավնասական հակահարվածի չեք  
մնում:

«Վոչ մի հույս մի՛ ունենա յերբեք»—հա ինչ եր ասում  
այդ տարրերին «Пролетарий»-ն իր յուրաքանչյուր համա-  
րով, յուրաքանչյուր խմբադրական ժողովով, յուրաքան-  
չյուր յելույթով կուսակցական կյանքի վոր հերթական  
հարցին ել վերաբերեր այն:

Յեւ հա, յերբ հերթական հարցերը դուրս յեկան (մեր  
հեղափոխության և մեր հակահեղափոխության դարդացման  
որեկետիվ պայմանների շնորհիվ դուրս յեկան) գրականու-  
թյան սպարեզում—աստվածաշինարարությունն ու մարք-  
սիզմի թեորեական հիմունքները, իսկ քաղաքական աշխա-  
տանքի սպարեզում—III Դումայի և III Դումայի ամբողջի  
սղտադործումը սոցիալ-դեմոկրատիայի կողմից,—այն ժա-  
մանակ այդ տարրերը համախմբվեցին և տեղի ունեցավ  
ընական և անխուսափելի պայթյունը:

Ինչպես և ամեն մի պայթյուն, այն տեղի ունեցավ  
միանգամից,—վոչ այն իմաստով, վոր տենդենցները չէին  
ուրվաղծվում ավելի առաջ, վոր այդ տենդենցների առան-  
ձին արտահայտումներ չկային,—այլ այն իմաստով, վոր  
տարակալիբր տենդենցների, այդ թվում նաև քաղաքակա-  
նությունից շատ հեռու տենդենցների, քաղաքական համա-  
խմբումը համարյա հանկարծակի կատարվեց: Այդ պատ-  
ճառով լայն հասարակությունը հակամեա ե, ինչպես և  
միշտ, ամենից առաջ յենթարկվել նոր պառակտման քաղ-  
քական բացատրությանը, այն բացատրելով ղեկավարներից  
մեկի կամ մյուսի վատ հատկություններով, արտասահմա-

նի, խմբակայնության ազդեցությամբ և այլն, և այլն:  
Կասկած չկա, վոր արտասահմանը, որեկետիվ պայմանների  
շնորհիվ դառնալով բոլոր կենտրոնական հեղափոխական  
կազմակերպությունների ոպերացիոն բաղալի անխուսափելի  
վայրը, իր դրոշմն ե դրել պառակտման ձևի վրա: Կասկած  
չկա, վոր այդ ձևի վրա արտահայտություն գտան նաև այն  
գրականագիտական խմբակի առանձնահատկությունները,  
վոր իր մեկ կողմով մտնում եր սոցիալ-դեմոկրատիայի  
մեջ: Մենք քաղքենիական բացատրություն ենք անվանում  
վոչ թե այդ պարագաների հաշվառումը, վորոնք անընդու-  
նակ են վորեև բան բացատրելու, բայի պառակտման ձևից,  
առիթմերից, «արտաքին պատմությունից», այլ տարածալ-  
նության իդեալական-քաղաքական հիմունքները, պատճառներն  
ու արմատները հասկանալ չցանկանալը կամ անընդունակու-  
թյունը:

Այդ հիմունքները չհասկանալը նոր Փրակցիայի կողմից  
նույնպես հանդիսանում ե այն բանի աղբյուրը, վոր այդ  
Փրակցիան կառչեց հին քողարկումից, վոչնչացնելով հեռ-  
քերը, ժխտելով ոսպովիզմի հեռ ունեցած անխղիչ կապը  
և այլն: Այդ հիմունքները չհասկանալը առաջացնում ե նոր  
Փրակցիայի կողմից սպեկուլացիա պատակուման քաղքենիա-  
կան բացատրության և քաղքենիական համակրություն ձեռք  
բերելու վերաբերմամբ:

Իսկապես, մի՞թե դա քաղքենիական համակրություն  
ձեռք բերելու սպեկուլացիա չե, յերբ Մաքսիմովն ու Բնկ.  
այժմ հրապարակով տրանջում են նրանց «դուրս վնդելու»,  
նրանց «հեռացնելու» առթիվ: Ձեր համակրության վողոր-  
մությունից մի վերանք տվեք, ի սեր քրիստոսի, ամեկ  
տեղը դուրս վնդվածներին, անարդարացի հեռացվածնե-  
րին... Վոր այդ պրիտմը անխալ կերպով հույս ունի քաղ-  
քենիական համակրություն ձեռք բերել, այդ սպացուցում  
ե այն որիդինալ փաստը, վոր նույնիսկ ընկ. Պլեխանովը,  
ամեն մի աստվածաշինարարության, ամեն մի «նոր» փիլի-  
սոփայության, ամեն մի ոսպովիզմի և ուլտիմատիզմի թըշ-  
նամին և այլն, նույնիսկ ընկ. Պլեխանովը ի սեր քրիստոսի  
վողորմություն տվեց, ոգտվելով Մաքսիմովի նվնվոցից,

և այդ առթիվ բուլղերիկներին դարձյալ ու կրկին անգամ «խառնապարանոց» անխնայ (տե՛ս Պլեխանովի «Дневник Социал-Демократа», 1909 ոգոստոս): Յեթե Մաքսիմովը համակրանքի փողորմություն դուրս կորզեց մինչև իսկ Պլեխանովից, ապա դուք կարող եք պատկերացնել, ընթերցող, թե համակրության վորքան արյունք կիթափվի Մաքսիմովի համար քաղցնիական տարրերի կողմից սոցիալ-դեմոկրատիայի ներսում և սոցիալ-դեմոկրատիայի շուրջը՝ լավ, բարեմիտ և համեստ ոտղովիստներին ու աստվածաշինարարներին «դուրս վռնելու» և «հեռացնելու» առթիվ:

«Չուրս վռնելու» և «հեռացնելու» հարցը մշակվում է ընկ. Մաքսիմովի կողմից թե՛ ձևականորեն և թե՛ ըստ դործի ելույթյան: Տեսնենք այդ մշակումը:

Ձևական տեսակետից Մաքսիմովի հեռացումը «հակաորինական» է, —ասում են մեզ հեռացվածները, —և «մենք չենք ընդունում այդ հեռացումը», վորովհետև Մաքսիմովն «ընտրված է բուլղերիկյան համադումարի կողմից, այսինքն՝ կուսակցական համադումարի բուլղերիկյան մասի կողմից»: Կարգալով Մաքսիմովի և Նիկոլայեվի թերթիկը՝ հասարակութունը տեսնում է մի ծանր մեղադրանք («հակաորինական հեռացում»), առանց ստանալու վո՛չ նրա ճշգրիտ ձևակերպումը, վո՛չ ել նյութ՝ դործի մասին դատելու համար: Բայց չե՞ վոր հենց այդպես է վորոշ կողմի մշտական պրիոմը արտասահմանյան պառակտումների ժամանակ — սովերարկել սկզբունքային տարածայնությունը, քողարկել այն, լուծյան մատնել իդեական վեճերը, թագցընել իրենց իդեական բարեկամներին և ավելի շատ աղմուկ հանել կաղմակերպական կոնֆլիկտների մասին, վորոնք հասարակութունն ի վիճակի չէ ճշտիվ քննարկելու և իրավունք չունի մանրամասն հետազոտելու: Այդպես էլին վարվում ռաբոչեդեղերականները 1899 թվին, աղաղակելով, թե վոչ մի «եկոնոմիզմ» չկա, բայց ա՛յ, Պլեխանովը զողացել է տպարանը: Այդպես էլին վարվում մենչևերիկները 1903 թվականին, աղաղակելով, թե նրանց մոտ վոչ մի չըջադարձ չկա դեպի ռաբոչեդեղականությունը, բայց ա՛յ, Լենինը «դուրս է վռնել» կամ «հեռացրել է» Պոսրեսովին, Ալսել-

րոդին և Չասուլչիին և այլն: Այդպես են վարվում այն մարդիկ, վորոնք սպեկուլացիա յեն անում մանր սկանդալի, սենսացիայի արտասահմանյան սիրահարների վերաբերմամբ: Վո՛չ ոտղովիզմ կա, վո՛չ աստվածաշինարարություն կա, այլ կա Մաքսիմովի «հակաորինական հեռացում» «խառնապարանոց» մեծամասնություն կողմից», վորն ուզում է «իր լիակատար սրամադրուքյան տակ քողնել» «ամբողջ ֆրակցիայի գույքը», — համեցե՛ք մեր խանութը, պարոններ՛ր, մենք կպատմենք ձեզ դրա մասին ամենապիկանտ բաները...

Հի՛ն պրիոմ է, ընկ. ընկ. Մաքսիմով և Նիկոլայեվ: Չի կարող պատահել, վոր իրենց վիզը չկտրեն այն քաղաքադեմոստրը, վորոնք այդ պրիոմին են դիմում:

Մեր «հեռացվածները» խոսում են «հակաորինականություն» մասին այն պատճառով, վոր «Пролетарий»-ի խմբագրությունը նրանք իրավագոր չեն համարում վճռելու բուլղերիկյան ֆրակցիայի վիճակի և նրա պառակտման հարցը: Շատ լավ, պարոններ՛ր: Յեթե «Пролетарий»-ի խմբագրությունն ու Լոնդոնի համադումարում ընտրված կենտկոմի 15 բուլղերիկ անդամներ և կենտկոմի անդամության թեկնածուներ իրավունք չունեն ներկայացնելու բուլղերիկյան ֆրակցիան, ապա դուք լիակատար հնարավորություն ունեք այդ հայտարարելու ի լուր ամենի և կամպանիա մղելու այդ անպետք ներկայացուցչությունը տապալելու կամ վերընտրություն կատարելու համար: Ասենք՝ դուք այդ կամպանիան մղեցիք ել և, միայն մի շարք վորոշ անհաջողություններ կրելուց հետո, դուք դերադասեցիք դանդաղովել ու նվախալ: Յեթե դուք հարց բարձրացրիք բուլղերիկների համադումարի կամ կոնֆերենցիայի մասին, ընկ. ընկ. Մաքսիմով և Նիկոլայեվ, ապա դուք ինչո՞ւ հասարակութունը չպատմեցիք, վոր ընկ. «Յերը» միֆանի ամիս սրանից առաջ արդեն Մոսկվայի Կոմիտեն բանաձևի նախադիժ մացրեց «Пролетарий»-ին անվստահություն հայտնելու և բուլղերիկների կոնֆերենցիա հրավիրելու՝ բուլղերիկների նոր իդեական կենտրոն ընտրելու համար:

Ինչո՞ւ դուք լռեցիք դրա մասին, ո՛ր, անարդարացի հեռացվածներ:

Ինչո՞ւ դուք լռեցիք այն մասին, վոր «Յերի» բանաձևը մերժվել է բոլոր ձայներով նրա միակ ձայնի դեմ:

Ինչո՞ւ դուք լռեցիք այն մասին, վոր 1908 թվականի աշնանը Պետերբուրգի ամբողջ կազմակերպության մեջ, ընդհուպ մինչև ստորին շերտերը, պայքար եր տեղի ունենում բոլշևիզմի մեջ յեղած յերկու հոսանքների, ոտզովխտաների և ոտզովիզմի հակառակորդների, պլատֆորմի չուրջը, ըստփորում ոտզովխտաները պարտութուն կրեցին:

Մաքսիմովն ու Նիկոլայեվն ուզում են հասարակութան առջև նվնվալ, վորովհետև նրանք բազմիցս պարտութուն են կրել Ռուսաստանում: Թե՛ «Յերը» և թե՛ Պետերբուրգի ոտզովխտաներն իրավունք ունեյին, առանց վորևե կոնֆերենցիայի սպասելու և առանց իրենց պլատֆորմները ամբողջ կուսակցութան առջև հրապարակելու, պայքար մղել բոլշևիզմի դեմ ընդհուպ մինչև ստորին շերտերը:

Բայց «Пролетарий»-ի խմբագրութունը, վոր 1908 թվականի հունիսից բացահայտ պատերազմ է հայտարարել ոտզովիզմին, իրավունք չունե՞ր մի տարվա պայքարից հետո, մի տարվա դիսկուսիաներից, մի տարվա բաղխումներից, կոնֆլիկտներից հետո և այլն, Ռուսաստանից մարզերի յերեք դելեգատներ և ընդլայնած խմբագրութան միջանկն ռուս անդամներ կանչելուց հետո, վորոնք մասնակցութուն չեյին ունեցել արտասահմանյան վոչ մի ընդհանուր մեջ, իրավունք չունե՞ր հայտարարելու այն, ինչ վոր կա, հայտարարելու, վոր Մաքսիմովը պառակտվել է իրենից, հայտարարելու, վոր բոլշևիզմը վոչ մի ընդհանուր բան չունի ոտզովիզմի, ուլտիմատիզմի և աստվածաշինարարութան հետ:

Դադարեցե՛ք կեղծավորելուց, պարոննե՛ր: Դուք պայքարում եյիք այնտեղ, վորտեղ դուք ձեզ առանձնապես ուժեղ եյիք համարում, և պարտութուն կրեցիք: Դուք ոտզովիզմը տարաք մասսաների մեջ՝ հակառակ բոլշևիկների սքաշտոնական կենտրոնի վորոշման և չսպասելով վոչ մի հատուկ կոնֆերենցիայի: Յեվ այժմ դուք սկսում եք նրվնվալ ու գանդառովել այն պատճառով, վոր դուք ծիծաղելիութան չափ չնչին փոքրամասնութուն դուրս յեկաք

ընդլայնած խմբագրութան մեջ, մարդերի դելեգատներէ մասնակցությամբ տեղի ունեցած Սորհրդակցության մեջ:

Մեր առաջ է դարձյալ արտասահմանյանների դուռ ուրոչեղելական պրիտմը. «դեմոկրատիա» խաղալ, յերբ պայմաններ չկան լիակատար դեմոկրատիայի համար, — սպեկուլացիա անել «արտասահմանում» ամեն տեսակ դժգոհութուն հրահրելու վերարեքամբ և միևնույն ժամանակ նույն արտասահմանից ուղղութուն տալ («դպրոցի» միջոցով) իր ոտզովխտական աստվածաշինարարական պրոպագանդային; — պառակտում սկսել բոլշևիկներին մեջ և ապա տրոնջալ պառակտման առթիվ, — կազմակերպել իր Ֆրակցիան («դպրոցի» ծածկույթի ներքո) և կեղծավորաբար արոցունք թափել «Пролетарий»-ի «պառակտիչ» քաղաքականութան առթիվ:

Վո՛չ, բայակա՛ն և արդեն այդ խառնակչութունը: Ֆրակցիան համախոհների ազատ միութունն է կուսակցութան ներսում, և մի տարուց ալելի պայքար մղելուց հետո, պայքար թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում, մենք լիակատար իրավունք ունեյինք, մենք պարտավոք եյինք վճռական յեզրակացութուն անել: Յեվ մենք արինք այդ յեզրակացութունը: Դուք լիակատար իրավունք ունեք պայքարելու նրա դեմ, հանդես բերելու ձեր պլատֆորմը, նրա համար մեծամասնութուն նվաճելու: Յեթե դուք այդ չեք անում, յեթե դուք փոխանակ բացահայտ դաշինքի ոտզովխտաների հետ և ընդհանուր պլատֆորմ առաջադրելու՝ կշարունակեք տափիւրնոցի խաղալ և սպեկուլացիա անել եժանազին արտասահմանյան «դեմոկրատիզմով», — ապա դուք իրև պատասխան կստանաք միայն ձեզ անբանի արհամարհանք:

Դուք յերկակի խաղ եք խաղում: Մի կողմից, դուք հայտարարում եք, վոր «Пролетарий»-ն ամբողջ մի տարի յե արդեն, վոր «շարունակ» վոչ-բոլշևիկյան դիժ է վարում (և ձեր կողմնակիցները Ռուսաստանում բազմիցս փորձ են արել այդ հայացքներն անցկացնել Պ. Կ.-ի և Մ. Կ.-ի բանաձևերում): Մյուս կողմից, դուք լաց եք լինում պառակտման համար և հրաժարվում եք ձանաչել «հեռացումը»: Մի

կողմից, դուք գործով ամեն ինչում ձեռք-ձեռքի տված եք ընթանում ոտգովիստների և աստվածաշինարարների հետ, մյուս կողմից,—դուք հրաժարվում եք նրանցից և հաշտաբարձեր եք ձևանում, վորոնք ցանկանում են բուլճեիկներին հաշտեցնել ոտգովիստների և աստվածաշինարարների հետ:

«Վոչ մի հույս մի՛ ունենաք յերբեք»: Դուք կարող եք ձեզ համար մեծամասնություն նվաճել: Դուք կարող եք բուլճեիկներին տհաս մասի մեջ ինչպիսի հաղթություն ուղում ե՛՛ ասանել: Մենք վոչ մի հաշտեցման չենք համաձայնի: Կառուցեցեք ձեր Փրակցիան, ավելի ճիշտը՝ շարունակեցեք կառուցել այն, ինչպես վոր արդեն սկսել եք այդ անել, բայց մի՛ խարեք կուսակցությանը, մի՛ խարեք բուլճեիկներին: Վոչ մի կոնֆերենցիա, վոչ մի համագումար աշխարհում բուլճեիկներին այժմ չի հաշտեցնի ոտգովիստների, ուլտիմատիստների և աստվածաշինարարների հետ: Մենք ասացինք, և մենք կրկնում ենք մի անգամ ել. յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատ բուլճեիկ և յուրաքանչյուր դիպակից բանվոր պետք է վճռական և վերջնական ընտրություն անի:

## VI

Գողարկելով իր իդեական ազգակիցներին, վախենալով ծափալել իր իսկական պլատֆորմը, նոր Փրակցիան աշխատում է իր իդեական բազաժի մեջ ունեցած թերին լրացնել հին պառակտումների բազաժից փոխ առած բառերի միջոցով: «Новый Пролетарий», «նովո-պրոլետարական գիծ»,—աղաղակում են Մաքսիմովն ու Նիկոլայովը, ընդորինակելով հին պայքարը նոր «Искра»-յի դեմ:

Մի պրիմ, վոր ընդունակ է սքանչացնելու վորոչ քաղաքական մանուկներին:

Բայց դուք մինչև իսկ հին բառերն ել չեք կարողանում կրկնել, պարոններ: «Նոր «Искра»-ի դեմ ուղղված» լոզունգի «ազն» այն եր, վոր մենչեիկները, ստանալով «Искра»-ն, իրենք պետք է նոր գիծ սկսեյին, մինչդեռ համագումարը (Ռ.Ս.—Դ.Բ.Կ. II համագումարը 1903 թվականին) հաստատեց հենց հին «Искра»-յի գիծը: «Ազն» այն եր,

վոր մենչեիկներն ստիպված եյին (Տրոցկու բերանով 1903—1904 թ. թ.) հույսակել, վոր հին ու նոր «Искра»-յի միջև անդունդ կա: Յեւ մինչև այժմ ել Պոտրեսովն ու Ընկ. աշխատում են ջնջել իրենց վրայից այն եպոխայի «հետքերը», յերբ նրանց զեկավարում եր հին «Искра»-ն:

Այժմ լույս է տեսնում «Пролетарий»-ի 47-րդ համարը: Ուղիղ յերեք տարի սրանից առաջ, 1906 թվականի ոգոստոսին, լույս տեսավ առաջին համարը: «Пролетарий»-ի այդ առաջին համարում, վոր կրում է 1906 թվականի սեպտեմբերի 3 (ոգոստոսի 21) թվադրությունը, գտնում ենք խմբագրական հոդված «Բոլշևիկի մասին», և այդ հոդվածում սևով սպիտակի վրա՝ «Այժմ հենց հասել է ժամանակը, յերբ հեղափոխական ս.՝դ. պետք է դադարեմ բոլշևիկստներ լինելուց»<sup>1</sup>): Այդ ժամանակվանից «Пролетарий»-ի վոչ մի համար չի յեղել, վորտեղ թույլ արված լիներ գտնե մի սող «բոլշևիզմի» (1906 թվականից հետո), ոտգովիզմի և ուլտիմատիզմի ոգտին, առանց հերքելու բոլշևիզմի այդ կարիկատուրան: Յեւ այժմ կարիկատուրային բուլճեիկները բարձրանում են փայտե վտտների վրա, փորձելով համեմատել իրենց այն մարդկանց հետ, վորոնք սկզբում անցկացրին հին «Искра»-յի յեռամյա կամպանիան և ամբաղնեցին նրա գիծը կուսակցության II համագումարով, իսկ հետո ցույց տվին նոր «Искра»-յի շրջադա՛րձը:

«Պոպուլյար բանվորական «Вперед» լրագրի նախկին խմբագիր»—այսպես է ստորագրում այժմ ընկ. Մաքսիմովը, կամենալով հիշեցնել ընթերցողին, թե իբր «սաղերը փրկել են Հոռմը»: Չեր վերաբերմունքը դեպի «Вперед» լրագրի դիրքը—կպատասխանենք մենք Մաքսիմովին այդ հիշեցման առթիվ—նույնն է, ինչ վոր Պոտրեսովի վերահիշեցման առթիվ—նույնն է, ինչ վոր Պոտրեսովը նրա խմբաբերմունքը դեպի հին «Искра»-ն: Պոտրեսովը նրա խմբաբերմունքը դեպի թե նա յեր վարում հին «Искра»-ն, այլ հին «Искра»-ն եր վարում նրան: Հենց վոր նա կամեցավ գիծը փոխել,—նրանից յերես շուտ տվին հին իսկրայականները: Յեւ այժմ նույնիսկ Պոտրեսովն ինքը կաշվից դուրս է դալիս, վորպեսզի մաքրվի «յերիտասարդության

<sup>1</sup> Տե՛ս Յերկերի X հ., էջ 29: Խմբ.:

մեղքից», հին «Искра»-յի խմբագրութան մեջ մասնակցելուց:

Վո՛չ թե Մաքսիմովն եր վարում «Вперед» լրագիրը, այլ «Вперед» լրագիրն եր վարում Մաքսիմովին: Ապացույց. III Դումայի բոյկոտիցմը, վորի ոգտին վոչ մի հատիկ խոսք չստաց և չեր կարող ստել «Вперед» լրագիրը: Մաքսիմովը շատ խելացի և լավ եր վարվում, յերբ թույլ եր տալիս, վոր «Вперед» լրագիրը վարել իրեն: Մաքսիմովն այժմ սկսել և այնպիսի գիծ հորինել (կամ, վոր միևնույնն և, ոգնել ոտգովխատներին հորինելու), վոր նրան անխուսափելիորեն դեպի ճահիճ և տանում, ինչպես և Պոտրևսովին:

Մտքներդ պահեցեք այս, ընկ. Մաքսիմով, համեմատութան համար հիմք պետք և վերցնել իդեական-քաղաքական ուղղութան ամբողջականութունը, և վոչ թե «բռներ», վոչ թե «լողունդներ», վորոնք սա ու նա սերտում են, առանց նրանց իմաստը հասկանալու: Բուլշևիցմն պնդկացրեց յերեք տարվա ընթացքում, 1900—1903, հին «Искра»-ն և պայքարի դուրս յեկա՞վ մենչևիցմի դեմ իրրև մի ամբողջական ուղղութուն: Մենչևիկները յերկար խճճվում էյին իրենց համար նոր միութան հետ, հակախկրայականների հետ, արոջեգելականների հետ, մինչև վոր Պոտրևսովին հանձնեցին Պրոկոպովիչին (և արգյո՞ք միայն Պոտրևսովին): Բուլշևիցմը «բոյկոտիցմի» և այլն դեմ մղվող վճռական պայքարի վողով տարավ հին «Пролетарий»-ն (1906—1909 թ. թ.) և, իրրև մի ամբողջական ուղղութուն, պայքարի յերավ այն մարդկանց դեմ, վորոնք այժմ հնարում են «ոտգովիցմը», «ուլտիմատիցմը», «աստվածաշինարարութունը» և այլն: Մենչևիկները կամենում էյին հին «Искра»-ն ուղղել Մարտինովի և եկոնոմիստների վողով—և այդ վործում իրենց մեջը կտորեցին: Դուք կամենում ենք հին «Пролетарий»-ն ուղղել «Յերի», ոտգովիստների և աստվածաշինարարների վողով,—և այդ վործում դուք ձեր մեջը կկտորեք:

Իսկ «չըջագա՞րձը դեպի Պլեխանովը»,—ցնծում և Մաքսիմովը: Իսկ «կենտրոնի նոր փրակցիայի» ստեղծումը:

Յեվ մեր «նույնպես բուլշևիկը» «դիպլոմատիա» յե հայտարարում այն բանի ժխտումը, իրբ «նկատի յե առնվում «կենտրոնի» իդեայի իրականացումը»:

Մաքսիմովի այդ ազդակները «դիպլոմատիայի» դեմ և «Պլեխանովի հետ միավորվելու» դեմ ծիծաղել յեն արժանի: Կարելիատուբային բուլշևիկներն այստեղ ել հավատարիմ են իրենց. նրանք ամուր սերտել են, վոր Պլեխանովը 1906—1907 թվականներին արխի-ոպորտունիստական քաղաքականութուն եր վարում: Յեվ նրանք կարծում են, վոր յեթի այդ ավելի հաճախակի կրկնեն, առանց ըմբռնելու տեղի ունեցած փոփոխութունները, ապա այդ կնշանակի ամենամեծ «հեղափոխականութունը»:

Իրբ «Пролетарий»-ի «դիպլոմատները», Լոնդոնի համագումարից սկսած, բացահայտ կերպով ամբողջ ժամանակը վարում էյին և կերտեցին կուսակցականութան քաղաքականութունը Փրակցիոնականութան կարիկատուբային չավազանցութունների դեմ, մարքսիցմի պաշտպանութան քաղաքականութունը նրա քննադատութան դեմ: Յեվ Մաքսիմովի ազդակների այժմյան աղբյուրն ել յերկակի յե. մի կողմից, սկսած Լոնդոնի համագումարից, միշտ կային առանձին բուլշևիկներ (որինակ՝ Ալեքսիևսկին), վորոնք պնդում էյին բուլշևիցմի դիծը «հաշտվողականութան» դիծով, «լեհ-լատիշական» դիծով փոխարինելու մասին և այլն: Բուլշևիկները հազվադեպ էյին լուրջ ընդունում այդ միանգամայն հիմար ճառերը, վորոնք վկայում էյին միմի-այն մտածողութան քարացածութան մասին: Մյուս կողմից, այն զրական կոմպանիան, վորին պատկանում և Մաքսիմովը և վորը միշտ միմիայն իր մի կողով եր մոտենում սոցիալ-դեմոկրատիային, յերկար ժամանակիա ընթացքում իր աստվածաշինարարական և այլ տեղեկեցների զլխավոր թշնամին Պլեխանովի մեջ եր տեսնում: Այդ կոմպանիայի համար Պլեխանովից սարգափելի բան չկա: Բանվորական կուսակցութանն իր իդեաները պատվաստելու նրա հույսերի համար վոչ մի ուրիշ ավելի խորտակիչ բան չկա, քան «միավորումը Պլեխանովի հետ»:

Յեվ ահա, այս յերկակի տեսակի տարրերը—քարացած

Փրակցիոնականութիւնը, վորը չի հասկանում բոլշևիկյան Փրակցիայի խնդիրները՝ կուսակցութիւն ստեղծելու վերաբերմամբ, և աստվածաշինարարների և աստվածաշինարարութեան քողարկիչների լիտերատորական-խմբակային տարրերը—այժմ համախմբվել են հետևյալ «պլատֆորմով»․ ընդդէմ «Պլեխանովի հետ միախորվելու», ընդդէմ «Пролетарий»-ի «հաշտողական», «լեհ-լատիշական» դժի և այլն:

Պլեխանովի այժմ լույս տեսած «Дневник»-ի № 9-ը ինձ ազատում է կարեկատուրային բոլշևիկներին այդ «պլատֆորմի» ամբողջ կարեկատուրային լինելը ընթերցողին առանձնապէս մանրամասն բացատրելու անհրաժեշտութիւնից: Պլեխանովը մերկացրեց լիկվիդատորութիւնը «Голос Социал-Демократа»-յում, նրա խմբագիրների դիպլոմատիան և հայտարարեց, վոր նրա «ուղին մեկ չէ» Պոտրեսովի հետ, վորը դադարել է հեղափոխական լինելուց: Ամեն մի սոցիալ-դեմոկրատի համար այժմ պարզ է, վոր քանկոր մենչևիկները կզան Պլեխանովի հետևից Պոտրեսովի դէմ: Ամեն մեկի համար պարզ է, վոր մենչևիկներին միջև յեղած պառակտումը հաստատում է բոլշևիկներին գիծը: Ամեն մեկի համար պարզ է, վոր լիկվիդատորների պառակտողականութեան դեմ Պլեխանովի կողմից կուսակցական դժի հռչակումը նշանակում է բոլշևիզմի հսկայական հաղթութիւն, բոլշևիզմի, վորն այժմ գլխավորող գերք է գրաւում կուսակցութեան մեջ:

Բոլշևիզմն այս հսկայական հաղթութիւնը տարալ այն պատճառով, վոր նա վարում էր իր կուսակցական քաղաքականութիւնը հակառակ «ձախ» տհասների և աստվածաշինարարական գրականագետների աղաղակների: Միայն այդ մարդիկ են ընդունակ վախենալու մերձեցումից այն Պլեխանովի հետ, վորը մերկացնում ու բանփորակրան կուսակցութիւնից վնդում է Պոտրեսովներին: Միայն աստվածաշինարարական խմբակի կամ սերտած Փրագի հերոսների կանգնած ճահճում կարող է հաջողութիւն ունենալ «պլատֆորմն» ընդդէմ «Պլեխանովի հետ միախորվելու», այսինքն՝ ընդդէմ կուսակցական մենչևիկներին հետ մերձենա-

լու՝ լիկվիդատորների դեմ պայքարելու համար, ընդդէմ որթողքսալ մարքսիստների հետ մերձենալու (այդ շահավետ չէ գրականագետների յերողինյան կոմպրոմիսի համար), ընդդէմ կուսակցութեան հետագա նվաճման՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական քաղաքականութեան և տակախակի համար:

Մենք, բոլշևիկներս, կարող ենք մատնանշել մեծ հաջողութիւններ այդպիսի նվաճման գործում: Ռոզա Լուքսեմբուրգը և Կարլ Կաուցկին—սոցիալ-դեմոկրատներ, վորոնք հաճախ գրում են ուսաների համար և այդ չափով մտնում են մեր կուսակցութեան մեջ—իդեալապէս նվաճված են մեր կողմից, չնայած այն բանին, վոր սրտակոծման սկզբում (1903 թ.) նրանց բոլոր համակրութիւնները մենչևիկներին կողմն էին: Նրանք նվաճվեցին նրանով, վոր բոլշևիկները գիջումներ չէին անում մարքսիզմի «քննադատութեանը», նրանով, վոր բոլշևիկները պաշտպանում էին վո՛չ թէ նրանով, վոր բոլշևիկները պաշտպանում էին վո՛չ թէ իրենց, անպայման իրենց Փրակցիոն թեորիայի տառը, այլ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական տակախակի ընդհանուր վողին ու իմաստը: Մենք այսուհետեւ ել գնալու յենք նույն ճանապարհով, ե՛լ ավելի անողորք պատերազմ ենք մղելու տառակերական թերամտութեան և սերտած Փրագներով թէթեամտորեն խաղալու դեմ, դրականագետների աստվածաշինարարական խմբակի թեորիական ռեվիզիոնիզմի դեմ:

Ռուս սոցիալ-դեմոկրատների մոտ այժմ միանգամայն պարզ կերպով ուրվադձվել է յերկու լիկվիդատորական հոսանք—պոտրեսովյան և մարքսիստյան: Պոտրեսովն ստիպված է վախենալու Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնից, վորովհետեւ այսուհետեւ անհուսալի բան է այդ կուսակցութեան մեջ նրա գիծն անցկացնելը: Մարքսիստին ստիպված է վախենալու Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնից, վորովհետեւ այժմ անհուսալի բան է այդ կուսակցութեան մեջ նրա գիծն անցկացնելը: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ամեն տեսակ ուղիղ և սխալ միջոցներով պաշտպանելու և քողարկելու յեն հատուկ գրականագիտական խմբակների արարքները, ռեվիզիոնիզմի՝ սրանց համար առանձնա-

հատուկ տեսակներով մարքսիզմի մեջ: Թե՛ մեկը և թե՛ մյուսը կառուցելու յեն, վորպես հույսի վերջին նշույլի, խմբակայնության վստիս պահպանելուն ընդդեմ կուսակցականության, վորովհետև Պոտրեսովը կարող է դեռ յերբեմն հաղթել քարացած մենչևիկները ընտրովի կոմպանիայում, Մաքսիմովին դեռ կարող են յերբեմն դափնիներով պահել բուլչևիկների ընտրովի-քարացած խմբակներ, բայց վո՛չ մեկը և վո՛չ էլ մյուսը այլևս յերբեք չեն կարող հաստատուն տեղ դրափել վո՛չ մարքսիստների մեջ, վո՛չ էլ իսկապես սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ներկայացնում են յերկու հակադիր, բայց միմյանց փոխադարձաբար լրացնող միակերպ սահմանափակ, մանր-բուրժուական տենդենցիաներ սոցիալ-դեմոկրատիայի մեջ:

## VII

Մենք ցույց տվինք, թե ինչպիսին է նոր Փրակցիայի շտաբը: Վո՞րտեղից և հավաքագրվում նրա բանակը: Բուրժուա-դեմոկրատական տարրերից, վորոնք հարել են բանվորական կուսակցությանը հեղափոխության ժամանակ: Պրոլետարիատն ամենուրեք և միշտ հավաքագրվում է մանր բուրժուադիայից, ամենուրեք և միշտ կատրված է լինում նրա հետ հաղարավոր անցման աստիճաններով, յեղբերով, յերանգներով: Յերբ բանվորական կուսակցությունն առանձնապես արագ է աճում (ինչպես այդ յեղալ մեզ մոտ 1905—1906 թվականներին), անխուսափելի յե նրա մեջ մանր-բուրժուական վողով տողորված տարրերի մասսայի ներթափանցումը: Յեյ դրա մեջ վոչ մի վատ բան չկա: Պրոլետարիատի պատմական խնդիրն է—մարտել, վերաուսուցանել, վերադաստիարակել հին հասարակության բոլոր տարրերը, վոր սա նրան ժառանգություն է թողնում իրրև մանր բուրժուադիայից յերածներ: Բայց դրա համար հարկավոր է, վորոպեսզի պրոլետարիատը վերադաստիարակի այդ յելուկներին, նա՛ պղզի նրանց վրա, և վոչ թե սրանք՝ նրա վրա: «Ազատության որերի սոցիալ-դեմոկրատներից» շատ շատերը, առաջին անգամ սոցիալ-դեմոկրատ դառնալով հրապուրանքի, տոնի որերին, պայծառ լողունգները:

որերին, պրոլետարիատի հաղթության որերին, վոր պլանտեցրեց նույնիսկ զուտ բուրժուական ինտելիգենցիայի զլուկները, սկսեցին սովորել լրջորեն, սովորել մարքսիզմ, սովորել հետեոդական պրոլետարական աշխատանք,—նրանք միշտ սոցիալ-դեմոկրատներ ու մարքսիստներ կման: Ուրիշները դեռ չեն հաջողել կամ չեն կարողացել պրոլետարական կուսակցությունից վոչինչ ընդունել, բացի միքանի սերտած բառերից, անդիլ արած «պայծառ» լողունգներից, միքանի Փրագներից «բոյկոտիզմի», «մարտականության» մասին և այլն: Յերբ այդպիսի տարրերը մտքերովն անցկացրին բանվորական կուսակցության վզին փաթաթել իրենց «թեորիաները», իրենց աշխարհայացքը, այսինքն՝ իրենց սահմանափակությունը, պառակտումը նրանց հետ անխուսափելի դարձալ:

III Դուժմայի բոյկոտիստների ճակատագիրը ակնառու որինակով հիանալի կերպով ցույց է տալիս մեկ և մյուս տարրերի տարբերությունը:

Բուլչևիկների մեծամասնությունը, անկեղծ կերպով տարված հունիսի 16(3)—ի հերոսների հետ անմիջական և անհասպող պայքար մղելու ցանկությունը, հակվեց դեպի III Դուժմայի բոյկոտը, բայց շատ արագ կարողացալ զլուկի յելնել նոր դրությունից: Նրանք չեյին կրկնում սերտած խոսքերը, այլ ուշադրությամբ դիտում էյին նոր պատմական պայմանները, խորամուխ էյին լինում այն բանում, թե ինչու կյանքն այսպես ընթացալ, և վոչ թե այլ կերպ, աշխատում էյին զլստով և վոչ թե միայն լեղվով, նրանք լուրջ և հետեոդական պրոլետարական աշխատանք էյին կատարում և նրանք շուտով հասկացան «ոտողիզմի» ամբողջ հիմարությունը, ամբողջ խեղճությունը: Ուրիշները կատեցին բառին, սկսեցին չմարտած բառերից հորինել «իրենց դիժը», սկսեցին աղաղակել «բոյկոտիզմի, ոտողիզմի, ուլտիմատիզմի» մասին, սկսեցին այդ աղաղակներով փոխարինել այն պրոլետարական-հեղափոխական աշխատանքը, վոր պատվիրում էյին տվյալ պատմական պայմանները, սկսեցին նոր Փրակցիա ընտրել բուլչևիզմի բոլոր և ամեն տեսակի տհաս տարրերից: Բարե՛ ճանապարհ, սիրելիներ՛:

Մենք արևնք այն ամենը, ինչ կարող եյինք, վորպեսզի ձեզ  
մարքսիզմ և սոցիալ-դեմոկրատական աշխատանք սովորեց-  
նենք: Մենք այժմ ամենավճուական և անհաշտ պատերազմ  
ենք հայտարարում թե՛ լիկվիրատորներին աջից և թե՛ լիկ-  
վիրատորներին ձախից, վորոնք բանվորական կուսակցու-  
թյանն այլասերում են թեորիական օեվիզիոնիզմով և քա-  
ղաքականության ու տակտիկայի մեղչանական մեթոդ-  
ներով:



Քարզմ. Յե. Տ.-Մինասյան  
Խմբագիր Բ. Ն. Գավրյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Մբբագրիչ Վ. Զիդեյան  
Վանարու սրբագրիչ Լ. Աբովյան

Դրավիտի լիտոնր Վ. 1108, հրատ. № 799, պատվեր № 65  
Տիրաժ 7000, թղթի չափսը 72×105<sup>1</sup>/<sub>32</sub>  
(66 880 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1<sup>1</sup>/<sub>2</sub> տպ. մամուլ 3/3 թերթ թուղթ.  
Հանձնվել է արտագրության 22/III 1940 թ.  
Ստորագրված է տպագրելու 15/III 1940 թ.  
Դինը 45 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

« Ազգային գրադարան



NL0178933

